

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Ժամանակի Վատնում՝ Սահմանադրական Դատարանէն Ներս

Հայաստանի Սահմանադրական Դատարանէն ներս օրերէ ի վեր կը շարունակուին խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու արդիւնքներու բողոքարկման քննութիւնները: Քոչարեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքը, Սերժ Սարգսեանի ղեկավարած «Պատիւ Ունեն» դաշինքը եւ երկու այլ ուժեր բարձր դատարանէն կը պահանջեն ընտրութիւններու արդիւնքները անվաւեր հռչակել, քուէարկութեան երկրորդ փուլ նշանակել եւ կամ մասնաւորապէս նոր բաշխում կատարել՝ յաղթող կողմին տալով խորհրդարանի աթոռներու 3/5-րդը, ներկայիս մօտ 2/3-րդի փոխարէն:

Առաջին պահանջը եթէ որոշ չափով հասկնալի է, ապա միւս երկուքի պարագային կան ընտրական օրէնքներու յստակ կէտեր, որոնք կը սահմանեն երկրորդ փուլ նշանակելու եւ մասնաւորապէս բաշխելու սկզբունքները, որոնք կարելի չէ փոփոխութեան ենթարկել կողմերէն մէկու քմահաճոյքին ենթարկուելով:

Ինչ կը վերաբերի բողոքարկող կողմի ներկայացուցած փաստարկներուն, առաջին վայրկեանէն իսկ յայտնի դարձաւ որ, բոլոր նշուած կէտերը հիմնուած են ենթադրութիւններու եւ շահարկումներու վրայ, որոնք կապ չունին իսկական ընտրական խախտումներու հետ:

Անոնց գանգատները ընդհանրապէս կը վերաբերին Նիկոլ Փաշինեանի քարոզարշաւի ընթացքին ունեցած ելոյթներուն, մոռնալով որ վարչապետը պարզապէս կը հակադարձեր հակառակորդներու կողմէ հնչող հայհոյախառն սպառնալիքներուն: Նաեւ կը բողոքեն թէ Փաշինեան իրաւունք չունի հրաժարելէ ետք շարունակել մնալ որպէս վարչապետի պաշտօնակատար ու նման հարցեր, հակառակ որ անոր նախընթացը հաստատուած էր Սերժ Սարգսեանի հրաժարումէն ետք:


Ամենէն ծիծաղելի բողոքներէն մէկը այն է թէ, քարոզարշաւի ընթացքին վարչապետին ընկերակցած են մեծ թիւով ոստիկաններ եւ ապահովութեան ուժեր: Փաշինեանին պէտք էր մեղադրել եթէ նման զգուշաւորութիւն չցուցաբերեր եւ ոչ թէ հակառակը: Դիմացի կողմը ընդունակ է ամէն տեսակի դաւադրութեան, մանաւանդ որ անոնց շարքերուն մէջ են Հայոց անկախ պետականութեան մեծա-

«Մեր Օրակարգին Վրայ Հարցերու Հարցը Արցախի Կարգավիճակի Եզրտման Խնդիրն Է»: Փաշինեան՝ Յարուսիւնեանին

Հայաստանի վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան կառավարութենէն ներս հանդիպում ունեցած է Արցախի նախագահ՝ Արայիկ Յարուսիւնեանի հետ: Այն առաջինն է արտահերթ խորհրդարանական ընտրութիւններէն եւ Նիկոլ Փաշինեանի՝ Յուլիս 7-ին Ռուսաստանի կատարած աշխատանքային այցէն յետոյ:

Վարչապետի աշխատակազմը տեղեկացուցած է, որ Նիկոլ Փաշինեան իր խօսքին մէջ նշած է. «Շատ կարեւոր են համարում ընդգծել, որ նաեւ նախընտրական շրջանում են յստակ ձեւակերպել են 44-օրեայ պատերազմի բոլոր հանգամանքների մանրակրկիտ քննութիւնը, եւ կարեւոր է, որ կարողանանք ձեւակերպել այնպիսի ձեւաչափ ու այնպէս կազմակերպել աշխատանքը, որ այդ աշխատանքը լինի վստահելի, որովհետեւ շատ կարեւոր հարցերի պատասխաններ պէտք է ձեւակերպուեն»:

Փաշինեան ընդգծած է, որ 44-օրեայ պատերազմէն յետոյ բաւական լուրջ ջանքեր գործադրուած են Արցախի մէջ բնականոն կեանքը վերականգնելու համար:



Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Արցախի նախագահ Արայիկ Յարուսիւնեան Երեւանի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

են Արցախի մէջ բնականոն կեանքը վերականգնելու համար:

Վարչապետի պաշտօնակատարը ընդգծած է նաեւ, որ օրակարգին վրայ «հարցերի հարցը շարունակում է մնալ Արցախի կար-

գավիճակի ճշգրտման խնդիրը»:

«Եւ պէտք է արձանագրենք, որ Նոյեմբեր 9-ից յետոյ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահնե-

Շքեղ Հանդիսութեամբ Նշուեցաւ Հայ-Ամերիկեան Թանգարանի Հիմնարկէքը



Տեսարան մը հայ-ամերիկեան թանգարանի հիմնարկէքն

Կլենտէյլ քաղաքի եւ ԱՄՆ-ի համայն հայութիւնը, պատմական իշխատակելի օր մը ապրեցաւ անցեալ Կիրակի, Յուլիսի 11-ին, 2021: Արդարեւ, այս հիւրընկալ փերու հայ գաղութի գլխաւոր կազմակերպութիւններու միացեալ մարմնի տարիներու երազն էր ունենալ հայ-ամերիկեան թանգարան մը, որ միեւնոյն ժամանակ պիտի դառնար մշակութային կեդրոն մը, նորահաս սերունդներու ծանօթացնելու մեր դարաւոր մշակութի հարուստ ժառանգութիւնը:

Կլենտէյլի սիրտին, հանրային գրադարանի կողքի այգիին մէջ, թանգարանի շինութեան համար նախատեսուած հողատարածքն ստացած էր տոնական կերպարանք: Հիմնարկէքին համար պատշաճ նախապատրաստութիւններ եղած էին մեծ բծախնդրութեամբ: Ընտրանի հասարակութեան

մէջ իրենց տեղերը գրաւած էին Հայ-Ամերիկեան Թանգարանի Խնամակալ Մարմնի անդամները, յարանուանութեանց եւ քաղաքական ու մշակութային կազմակերպութեանց ղեկավարներ, գոնկրէսական Ատամ Շիֆ, ինչպէս նաեւ դաշնակցային եւ նահանգային ղեկավարներ, բարերարներ եւ այլ հիւրեր:

Խնամակալ Մարմնի գործադիր տնօրէն Շանթ Սահակեանի ողջոյնի ջերմ խօսքերէն ետք, ՀԲԸՄ-ի երգչախումբէն Լիլիա եւ Ալեքսանտրա Եարալեանի կատարմամբ յոտնկայս ունկնդրուեցաւ ազգային քայլերգը:

Հոգեւոր առաջնորդներու (փոխ-ատենապետներ) օրհնութեան աղօթքէն ետք՝ գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը, հանդիսավարութեամբ հեռատեսիլի

ԱԳՆ Հրաւիրուած Են Շարք Մը Երկիրներու Դիւանագիտներ

Յուլիս 9-10-ին, Ատրպէյճանի իշխանութիւններու կողմէ կազմակերպուած Լեռնային Ղարաբաղի Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցած տարած քննարկութեան որոշ երկիրներու ղիւանագիտական ներկայացուցիչներու մասնակցութեան առնչութեամբ, Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւն հրաւիրուած են համապատասխան ղիւանագիտական առաքելութիւններու ղեկավարները:

Արտաքին քաղաքական գերատեսչութեան հաղորդմամբ՝ դեսպաններուն փոխանցուած է անոնց երկիրներու կառավարութիւններուն ուղղուած յայտագիրներ, ուր, մասնաւորապէս, նշուած է, որ Հայաստանը բացարձակապէս անընդունելի կը համարէ Ատրպէյճանի մէջ հաւատարմագրուած ղիւանագիտական ներկայացուցիչներու այցելութիւնը, անոնց կարգին՝ Հաղորութ եւ Արցախի պատմական կեդրոն՝ Շուշի քաղաք, «որոնք ենթարկուել են ցեղային զտումների, իսկ բնակչութեան նկատմամբ Ատրպէյճանի զինուած ուժերի կողմից իրագործուել են պատերազմական յանցագործութիւններ եւ զանգուածային ոճրագործութիւններ»:

«Բոլոր հանդիպումներին ընթացքում շեշտուել է, որ ղիւանագիտական ներկայացուցիչներին ներգրաւուումը նմանօրինակ այցելութիւններին հակասում է Հա-

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Արտախորհրդարանական Խորհրդաւոր Ընթրիք Որտեղ Է ՉՔաքնուած Մտախիւր

ՅԱԿՈԲ ԲԱՂԱՆԵԱՆ

Արտախորհրդարանական ուժերի հետ առանձին հանդիպումներինց յետոյ, Հայաստանի վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը նրանց հետ հանդիպել է արդէն հաւաքական՝ կլոր սեղանի ձեւաչափով, այդով թերեւս դրսեւորելով նաեւ արտախորհրդարանական ուժերի հանգամանքի այսպէս ասած ինստիտուցիոնալացման հարցում քաղաքական իշխանութեան կամքի եւ լրջմտութեան վկայութիւն: Այդուհանդերձ, հանրութեան շրջանում, որ յետխորհրդային անկախ պետականութեան մօտ երեք տասնամեակում տեսել է բազմաթիւ լուրջ գաղափարների ու նախաձեռնութիւնների գրեթէ ակնթարթային անլրջացման մեծ պատմութիւն, բաց են մնում նոր նախաձեռնութեան հեռանկարի հետ կապուած հարցեր: Ինչպիսին է լինելու նոր ինստիտուցիոնալ մեխանիզմը, ինչով է այն որակով ու արդիւնաւետութեամբ տարբերուելու մինչ այդ եղածներից, այսօր էլ եղածներից, ինչ է բերելու մեր քաղաքական կեանք՝ հերթական հռչակագրերից զատ: Իհարկէ այդ հարցերի պատասխաններին առաւելագոյն մօտ լինելու համար հարկաւոր է մօտ լինել նախաձեռնութեան մտտիւններին, նախաձեռնողների պատկերացումներին, շահերին, մղումներին, հասկանալու համար, թէ այդ քայլը որքան է ժամանակաւոր, տակտիկական, կարճատեւ կէտ, եւ որքան է մշակ-

ուած ռազմավարական, հեռանկարային նախաձեռնութիւն:

Անկասկած է իհարկէ մի քանի կարեւոր հանգամանք: Նախ, Հայաստանը ներկայումս մի իրավիճակում է, երբ հասարակական քաղաքական կարգի կայունացման, կանխատեսելիութեան գոնէ նուազագոյն անհրաժեշտ մակարդակի ապահովման համար ստանդարտ մեխանիզմներն ու քայլերը բաւարար չեն եւ հարկաւոր են ոչ ստանդարտ գործողութիւններ: Դրանցից է արտախորհրդարանական ուժերի ձեւաչափի հիմնումը, թէ ոչ, ցոյց կը տայ ժամանակը, որքան էլ այսօր հնչեն գնահատականներ կամ կանխատեսումներ: Ի վերջոյ, կասկածից վեր է, որ ցանկացած քաղաքական նախաձեռնութեան ուժերը մասնակցում են իրենց կուսակցական, իմբային, յաճախ անձնական շահերի մղումով: Սա նորմալ է: Աննորմալութիւնը սկսում է այնտեղ, որտեղ այդ շահերը լրջագոյն հակասութեան մէջ են մտնում պետութեան, հանրութեան անվտանգային եւ արդիականացման հարցերի հետ, պետական եւ հանրային շահի հետ: Միեւնոյն ժամանակ, եթէ քաղաքական ուժերի շահերը այդ առումով ներդաշնակ կամ առնուազն համադրելի են պետական ու հանրային շահին, ապա այդ ուժերը հասարակական-քաղաքական, պետական կեանքում իրենց բարեբեր լուծման կարող են ներդնել նաեւ առանց յաւելեալ ձեւաչափերի: Թէ-եւ, միւս կողմից իհարկէ որքան

լայն լինի ստեղծագործական ներուժի եւ լրջմտութեան իրացման հնարաւորութիւնը, այդքան մեծ կը լինի արդիւնաւետութեան հեռանկարը: Առնուազն այդ տեսանկիւնից, նախաձեռնութիւնը ողջունելի է, թէեւ ժամանակի ու տարածութեան մէջ դեռեւս առկախ հարցերով:

Միւս հանգամանքը այն է, որ Հայաստանում ներքին համերաշխութեան, համակեցութեան նորմերի նուազագոյն կանխատեսելի բնոյթի եւ միջավայրի սահմանում ընդհուպ ազգային անվտանգութեան խնդիր է: Հետեւաբար, դրան ուղղուած ցանկացած նախաձեռնութիւն, եւ այդ նախաձեռնութեան հանդէպ դրական որեւէ արձագանք ողջունելի է, թէկուզ աւանտով, սպասելով, թէ ինչպիսին է լինելու յետագայ գործողութիւնների առարկայականութիւնը: Եւ մէկ այլ հիմնարար նշանակութեան խնդիր՝ Հայաստանի արտաքին մարտահրաւէրների բաւականին սուր միջավայրը, անվտանգային ռիսկերի բաւականին ակտիւ ռեժիմը, եւ դրանց հանդէպ պետական կենսունակութեան վերականգնման անհրաժեշտութիւնը: Եւ այստեղ վերականգնման գործընթացը պէտք է բաժանել երկու հատուածի՝ ռեսուրսային, եւ միջավայրային:

Ռեսուրսային առումով ամէն ինչ պահանջում է բաւականին երկար ժամանակ, պահանջում է տեւական աշխատանք թէ ներքին դաշտում, թէ արտաքին մի շարք ուժային կեղերոնների հետ: Ըստ

այդմ, կարեւոր է դառնում պետական քաղաքականութեան ճկունութեան միջավայրային գործօնի ձեւաւորումը: Առաւել եւս այն ահագանգից յետոյ, որ մեծ հաշուով հնչեց Մոսկուայում Փոլթին-Փաշինեան հանդիպմանը ՌԴ նախագահի շնորհաւորանքի տեսքով: Փոլթինը ընդգծելով Նիկոլ Փաշինեանի հանրային վստահութեան հաստատումը, նշեց սուր եւ զգայուն հարցերում որոշումներ ակնկալելու մասին: Մինչդեռ, մեծ հարցեր կան, թէ ինչ է նշանակում սուր ու զգայուն, եւ արդեօ՞ք Հայաստանի հանրութեան մանդատը ոչ թէ ուժ, այլ ծուղակ է լինելու այդ հանրութեան ընտրութեամբ մեծամասնութիւնը պահած քաղաքական իշխանութեան առաջ, յատկապէս հաշուի առնելով նաեւ, որ ինչ ընդդիմութիւն է ձեւաւորուել խորհրդարանում՝ առաւելապէս ռուսական շահերի դաշտում դիրքաւորուած ընդդիմութիւն:

Ահա այդ իրավիճակում թերեւս առաջանում է արտաքին խնդիրներում վստահութեան մանդատի ծուղակի վտանգը՝ հնարաւորինս չէզոքացնելու համար հասարակական-քաղաքական յաւելեալ շերտերի ձեւաւորման անհրաժեշտութիւն, որպիսին կարող է դիտարկուել նաեւ արտախորհրդարանական ուժերի միջավայրի որոշակի ինստիտուցիոնալացումը, իհարկէ դրա արդիւնաւետութեան վճարող նշանակութեամբ, քանի որ ինքնին ինստիտուցիոնալացումը կարող է լինել անբաւարար:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Սահմանագատման Զինքում Պէտք Է Դրուեն Իրաւական Փաստերը

ԱՐՄԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ

Հայ-ատրպէյճանական սահմանին օրէջցօր մեծացող լարուածութիւնը եւ միջադէպերի թուի աճն առաջին հարթակ են մղում երկու երկրների միջեւ սահմանազատման եւ սահմանագծման գործընթացի մեկնարկի առաջնայնութիւնը: Թերեւս, այդ նպատակն է հետապնդում Ատրպէյճանը՝ այս պահի դրութեամբ նախնական զծանշուած հայկական սահմանները խախտելու իր գործողութիւններով:

Այստեղ առաջնային հարց է դառնում, թէ սահմանազատման որ քարտէզները եւ մեթոտներն են օգտագործուելու այդ գործընթացում: Ներկայիս՝ GPS-ով արուած տարանջատումը միանշանակ հեռու է ճշգրիտ լինելուց, եւ դրա պատճառը ոչ միայն այս մեթոտի կիրառումն է, այլեւ նոյնիսկ նոյն մեթոտում հաշուարկման մեխանիզմների ընտրութեան խնդիր կայ:

Թերեւս, ամենաճշգրիտ քարտէզները Խորհրդային Միութեան ներքին միջհանրապետական քարտէզներն են, որոնք կարող են հիմք դառնալ սահմանազատման համար: Այս դէպքում էլ հարց է առաջանում, թէ որ ժամանակահատուածի քարտէզներն են դրա համար հիմք ընդունուելու, քանի որ հակառակ քարտէզներն են կայ նախորդ դարի 20-ականների եւ 80-ականների քարտէզների միջեւ:

Սահմանազատումը եւ սահմանագծումն իրական կարծընթացներ են, հետեւաբար, այն մեկնարկելու համար կարեւոր է խնդրի իրաւական կողմի ապահովումը,

իսկ վերջինս աղէտալի վիճակի կարող է հասնել պաշտօնական Պաքուին: Բանն այն է, որ ըստ գործող իրաւական հիմքերի՝ Ատրպէյճանը չունի որեւէ սահման: Ներկայիս Ատրպէյճանն իր անկախութիւնը հռչակելիս յայտարարել էր, որ չի հանդիսանում Խորհրդային Ատրպէյճանի իրաւաջողորդը, այլ մինչեւ 1920 թ. երկու տարի գոյատեւած մուսաֆաթական Ատրպէյճանն է ներկայացնում: Հռչակագրով Պաքուն, չի ճանաչում Խորհրդային սահմանները, այլ ընդունում է մինչ այդ եղած սահմանները, բայց մուսաֆաթական Ատրպէյճանին Ազգերի լիգան (ՄԱԿ-ի իրաւանախորդը) նախորդ պարի սկզբին միայն դէ ֆակտօ՝ առանց սահմանների էր ճանաչել: Ստացում է, որ այսօր Ատրպէյճանը իրաւական ուժով սահմաններ էլ չունի:

Եթէ իր գործելաոճին հաւատարիմ Ատրպէյճանն այս անգամ էլ հրաժարուի իր անկախութեան հռչակագրից եւ ընդունի Խորհրդային Միութեան ներքին սահմանները, ապա դրա համար էլ են պէտք հիմքեր: Միակ հիմքերը կարող են պահպանուած լինել ՌԴ-ի պետական արխիւներում՝ քարտէզների տեսքով: Ամենայն հաւանականութեամբ, դա նկատի ունէր ՌԴ ԱԳՆ խօսնակ Մարիա Զախարովան, երբ նախորդ օրը յայտարարեց, որ Ռուսաստանը պատրաստ է տրամադրել Խորհրդատուական աջակցութիւն՝ Ատրպէյճանի եւ Հայաստանի սահմանի դեղիմիտացիայի հարցով աշխատանքների սկսմանը՝ յետագայում դրա դեմարկացիայով երկու երկր-

ների միջեւ հակամարտութիւնը շուտափոյթ լուծելու համար: Մենք բազմիցս ընդգծել ենք, որ որպէս այս խնդրի կայուն եւ երկարաժամկէտ լուծում՝ տեսնում ենք Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ սահմանի սահմանազատման աշխատանքների շուտափոյթ մեկնարկը՝ դրան յաջողող սահմանագծմամբ: Մենք պատրաստ ենք տրամադրել անհրաժեշտ Խորհրդատուական աջակցութիւն, եւ ներկայումս շփումները շարունակում են արտաքին քաղաքականութեան եւ պաշտպանութեան գերատեսչութիւնների, ինչպէս նաեւ սահմանային ծառայութիւնների միջոցով, այդ թւում՝ լարուածութիւնը թուլացնելու նպատակով՝ յայտնել էր Զախարովան: Նրա խօսքով՝ Ռուսաստանը չի կարծում, որ իրավիճակը, որը ստեղծուել է երկու երկրների սահմանին, ուղղակիօրէն կապուած է Լեռնային Ղարաբաղի կարգաւորման հետ, այլ աւելի շուտ սահմանի օրինական գրանցման բացակայութեան հետեւանք է:

Նկատենք, որ ՌԴ-ն եւ Ատրպէյճանը նոյնպէս դեռ չեն աւարտել իրենց ընդհանուր սահմանի դեմարկացիայի հարցերի լուծումը: Երէկ Պաքուն աւարտուեց ռուս-ատրպէյճանական սահմանազատման համատեղ յանձնաժողովի 9-րդ նիստը:

Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանազատման հարցում խնդիրները շատ են, բնականաբար, քննարկուելիք հարցերն էլ են ծա-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԻՑ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՂԵ ԱՋԱՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Արտախորհրդարանական Ուժերու Ղեկավարներուն Հետ Քննարկած Է Հետագայ Համագործակցութեան Ձեւաչափը



Արտախորհրդարանական կուսակցութիւններու համդիպումը վարչապետին հետ

Վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան Յուլիս 9-ին, հանդիպած է արտախորհրդարանական շուրջ տասը քաղաքական ուժերու ղեկավարներու հետ:

Ըստ վարչապետի գրասենեակին՝ հանդիպման մասնակցած են «Ազատական կուսակցութեան առաջնորդ՝ Սամուէլ Բաբեանը, «Ալեանս» առաջադիմական կեդրոնամէտ կուսակցութեան առաջնորդ՝ Տիգրան Ուրիխանեանը, «Արդար Հայաստան» կուսակցութեան ղեկավար՝ Նորայր Նորիկեանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցութեան ղեկավար՝ Դաւիթ Սանասարեանը, Հայաստանի դեմոկրատական կուսակցութեան ղեկավար՝ Տիգրան Խզմալեանը, Հայաստանի Բրիտտոնեայ-դեմոկրատական կուսակցութեան ղեկավար՝ Տիգրան Խզմալեանը, Հայաստանի Քրիստոնեայ-դեմոկրատական կուսակցութեան նախագահ՝ Լեւոն Շիրինեանը, «Միասնական հայրենիք» կուսակցութեան նախագահ՝ Մհեր Տէրտէրեանը, Պահպանողական կուսակցութեան ղեկավար՝ Միքայէլ Հայրապետեանը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչութեան ատենապետ՝ Սեդրակ Աճէմեանը:

Փաշինեան տեղեկացուցած է,

որ եւս քանի մը կուսակցութիւններու հետ նախապէս պայմանաւորուածութիւն եղած է, պարզապէս «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար՝ Արամ Սարգսեանը եւ «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան նախագահ՝ Էտմոն Մարուքեանը Հայաստան չեն գտնուիր:

Վարչապետի պաշտօնակատարը ընդգծած է, որ այս առաջին հանդիպումը զուտ կազմակերպչական բնոյթ ունի. - «Պէտք է փորձենք մշտական գործող ձեւաչափ ձեւաւորել իմ մասնակցութեամբ եւ արտախորհրդարանական ուժերի ներկայացուածութեամբ: Մենք սա դիտարկում ենք որպէս, այսպէս ասած, մեր հանրային կեանքի, քաղաքական կեանքի, տնտեսական կեանքի օրակարգային հարցերի քննարկման հարթակ ու եթէ կարելի է այսպէս ասել՝ մտազոտի տեղ, որտեղ կարող ենք բոլոր հնարաւոր հարցերը քննարկել»:

Որոշում կայացուած է վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանի եւ արտախորհրդարանական քաղաքական ուժերու ղեկավարներու մասնակցութեամբ առաջին նիստը գումարել առաջիկային:

Ընտրական Գործընթացի Ամբողջ Ընթացքին Բերման Ենթարկուած Է 110 Անձ

«Ընտրական գործընթացի ամբողջ ժամանակահատուածին՝ ընտրութիւնները նշանակելու օրէն մինչեւ քուէարկութեան օր, բերման ենթարկուած է 110 անձ»: Սահմանադրական դատարանին մէջ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքները վիճարկող դիմումներու քննութեան ժամանակ, այս մասին ըսած է Երեւան քաղաքի դատախազ՝ Սեւակ Յովհաննիսեան:

Դատախազը յայտնած է, որ բերման ենթարկուածներէն 20-ը «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչներն են, համակիրներն են, վստահուած անձինք եւ այս կամ այն կերպ դաշինքի հետ կապ ունեցող անձինք, 39-ը «Պատիւ ունեմ» դաշինքին, իսկ մնացած 51-ը եղած են կամ այլ կուսակցութեան, կամ ընտրական գործընթացի մասնակիցներ:

Երեւանի դատախազի խօսքով՝ ընտրական գործընթացի ժամանակահատուածին կատարուած է 29 խուզարկութիւն, որոնցմէ 7-ը

կատարուած է «Հայաստան» դաշինքին առնչուող անձանց բնակարաններուն կամ շինութիւններուն մէջ, 20-ը «Պատիւ ունեմ» դաշինքին, իսկ 2-ը՝ այլ:

«Այդ խուզարկութիւնները կատարուել են իրաւական եւ փաստական հիմքերի վերաբերեալ պատշաճ հիմնաւորուած միջնորդութիւնների հիման վրայ, դատարանների կողմից կայացուած դատական աքթերով, որոնց օրինականութեան վերաբերեալ վերադաս դատական ատեաններ ներկայացուած բողոքների առկայութեան մասին տեղեկութիւններ չուները:

Մեր կարծիքով «Հայաստան» եւ «Պատիւ ունեմ» դաշինքների բերման ենթարկուած համակիրներին եւ նրանց բնակարաններում ու շինութիւններում կատարուած խուզարկութիւնների թիւը համաչափ է նրանց կողմից կատարուած առեւտրային ընտրական յանցագործութիւնների վերաբերեալ հարցողութիւնների թիւին», - ըսած է դատախազ՝ Սեւակ Յովհաննիսեան:

Կը Շարունակուին Սիւնիքի Համայնքապետերու Ձերբակալութիւններն Ու Կալանաւորումները

Ձերբակալուած է Մեղրիի նախկին քաղաքապետ՝ Մխիթար Չաքարեանը, որ հրաժարականի դիմում ներկայացուցած էր երեք օր առաջ, հիմնաւորելով, որ ան «Հայաստան» դաշինքի պատգամաւորութեան թեկնածու է եւ կ'երթայ խորհրդարան մասնաթիւ վերցնելու:

Քննչական կոմիտէն այժմ գինք մեղադրած է Քրէական օրէնսգիրքի քանի մը յօդուածներով՝ պաշտօնական լիազօրութիւններու չարաշահում եւ պաշտօնական կեղծիք: Հրաժարականի թեմայով «Ազատութիւնը» գրուցած էր Մեղրիի նախկին քաղաքապետին հետ: Ան ըսած էր, որ ժամկէտէն կանուխ կը հեռանայ, քանի որ զգացած է, որ համայնքը կը տուժէ. - «Քրէական գործընթացներ կան, անընդհատ լինում են՝ իմ ազգականներին, մօտիկներին... Եւ բացառապէս իմ անունն են տալիս: Ում կանչում են, առաջին հարցը դա է՝ ինչ կապ ունէք համայնքապետի հետ: Բայց, հաւատացնում եմ, երէկուայ քայլը զուտ համայնքի շահերից ելնելով [եմ արել]. համայնքի ղեկավարից հրաժարուանք, հո Հայաստանի քաղաքացիութիւնից չե՞նք հրաժարուում: Էստեղ ենք, միշտ էլ պատրաստ ենք պատասխան տանք: Ուղղակի չուզեցի էր միջնորդու... համայնքապետարանի աշխատակիցներին են անընդհատ ոստիկանութիւն կանչում...»

Չաքարեանի փաստաբան՝ Երեմ Սարգսեան ընկերային ցանցերու գրառմամբ տեղեկացուցած է, որ Չաքարեանի ձերբակալումը արդէն բողոքարկած են: Ան ներկայա-



Մեղրիի նախկին քաղաքապետ՝ Մխիթար Չաքարեան

ցուցած է նաեւ նախկին քաղաքապետի ձերբակալման պատմութիւնը, որ իրենք ինքնակամ ներկայացած են ոստիկանութիւն, բայց ոստիկանութեան շէնքի մէկ այլ մուտքէն դուրս եկած են ոստիկանական երկու փոքր հանրակառքեր, որոնցմէ ելած են բազմաթիւ դիմակաւոր անձեր, եւ անօրինական կարգով եւ անհամաչափ ուժ ու բռնութեամբ գործադրելով՝ Մխիթար Չաքարեանը պառկեցուցած են գետին, նկարահանած, որմէ ետք բռնութեամբ ներս տարած՝ այդ ընթացքին խոչընդոտելով նաեւ փաստաբաններու գործունէութիւնը:

Այս պահուն առանց համայնքապետերու մնացած են Սիւնիքի մարզի Քաջարան քաղաքը, Մեղրին, Որոտանը եւ Քարահունջը: Այս համայնքներու ղեկավարները կալանաւորուած կամ ձերբակալուած են:

Չարչեան Կը Մնայ Կալանաւորուած. Դատարանը Հրապարակեց Որոշումը

«Հայաստան» դաշինքի անդամ, «Իզմիրլեան» բժշկական կեդրոնի տնօրէն՝ Արմէն Չարչեանի նկատմամբ խափանման միջոց կալանքը կը մնայ անփոփոխ: Վերաքննիչ դատարանը հրապարակեց խափանման միջոց ընտրուած կալանաւորման դէմ որոշումը:

Արմէն Չարչեան կը մեղադրուի հիւանդանոցի անձնակազմին վրայ ճնշում բանեցնելու մէջ, որպէսզի անոնք քուէարկեն «Հայաստան» դաշինքի օգտին: Այդ մասին գաղտնի ձայնագրութիւնը ընտրութիւններէն մի քանի օր առաջ հրապարակած էր «Անկախ Դիտորդ» կազմակերպութիւնը:

Անոր պաշտպանները դիմած էին վերաքննիչ խնդրելով բեկանել կալանաւորման վերաբերեալ առաջին ատեանի դատարանի երկու շաբաթ առաջ կայացուցած որոշումը:

«Վերքննիչ քրէական դատարանը, Լուսինէ Աբգարեանի նախագահութեամբ, մերժեց մեր կողմից ներկայացուած վերաքննիչ բողոքը: Մերժեց՝ բաւականին դողդողացող ձայնով: Ամէն ինչ ընկալելի է, հասկանալի է, բայց իրաւաչափ չէ: Բոլոր առումներով կարելի է այս ամէն ինչը հասկանալ՝ ճնշումներ, դատաւորների նկատմամբ նոր որակի մօտեցումներ, բայց դրանցից իւրաքանչիւրը կապ չունի իրաւունքի հետ: Մենք եկել



«Իզմիրլեան» բժշկական կեդրոնի տնօրէն՝ Արմէն Չարչեան

էինք վերաքննիչ դատարան՝ արդարադատութեան առիթով», - լրագրողներու հետ ճեպագրուցի ժամանակ ըսաւ փաստաբան՝ Արամ Վարդեանեան՝ ընդգծելով. - «Յաւաք սրտի, ունեցանք հերթական անգամ քաղաքական հետապնդման յարձակման դրսեւորման դէպքով կալանաւորման դէպքի շահագործումը: Ես ցաւում եմ դրա համար, միւս կողմից էլ ինչքան էլ ճնշումները կատարեն, ապօրինութիւնները շարունակուեն, վստահ եղէք, Արմէն Չարչեանը լինելու է ազատութեան մէջ, դրանում երկրորդ կարծիք չկայ: Կարճ ժամանակ անց կը հանդիպենք Առաջին ատեանի դատարանում»:

ԼՈՒՐԵՐ

Ատրպեյճանի Քաղաքական Վերնախառն Դժգոհ Ե Մինսքի Խուճը Երկիրներու Շուշի Չերթալէն



Ատրպեյճանի մէջ հաւատարագրուած դիւանագետներու այցը Շուշի

Ատրպեյճանական մամուլը արդէն երկրորդ օրն է, որ վրդովուած է ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախազահ երկիրներու դեսպաններու, ինչպէս ատրպեյճանցի մեկնաբանները կը գրեն՝ տեմարչին:

Յուլիս 9-10-ին, Ատրպեյճանի մէջ հաւատարագրուած քառասունվեց դեսպաններ այցելած են Շուշի, սակայն անոնց կարգին չեն եղած Լեւոնային Ղարաբաղի խնդրի կարգաւորմամբ զբաղող ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախազահ երկիրներու՝ Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի եւ Ռուսաստանի դեսպանները: Ընդ որում, ատրպեյճանցի լրագրողները եւ վերլուծաբանները ամէնէն շատ վրդովեցուցած է ռուս դեսպանի բացակայութիւնը:

Միջազգային հարցերով Ատրպեյճանի նախագահի օգնական՝ Հիմֆեթ Հաճիբեւը լրագրողներուն ըսած էր, որ դեսպաններու այցը Շուշի Ալիեւի նախաձեռնութիւնն էր: Ատրպեյճանական մամուլը այս կապակցութեամբ գրած է, որ այս Մինսքի խումբի համանախազահ երկիրներու դեսպաններու «ընդգծուած տեմարչն է յաղթող նախագահ՝ Ալիեւի դէմ»:

Պաշտօնական Պաքուն այս տեմարչին դեռ չէ արձագանգած: Շուշի այցելած դեսպաններուն կարգին էին նաեւ ՀԱՊԿ անդամ երեք պետութիւններու՝ Ղազախստանի, Տաճիկստանի եւ Պելառուսիոյ դեսպանները, ինչպէս նաեւ Աւստրիոյ, Պուլղարիոյ, Պրագիլիոյ, Չինաստանի, Ալժերիոյ, Պաղեստինի, Վրաստանի, Խրուսթիոյ, Յորդանանի, Իսրայէլի, Շուէտի, Չուէրիոյ, Իտալիոյ, Բուլղարիոյ, Բորնիոյ, Քաթարի, Լաթվիոյ, Հունգարիոյ, Մալայզիոյ, Մեքսիքայի, Մարոքի, Հոլանտայի, Փաքիստանի, Լեհաստանի, Սերպիոյ, Սէնտական Արաբիոյ, Թուրքիոյ, Ուքրանիոյ, Ճափոնի, Յունաստանի, Պելճիքայի, Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Չիլիի, Էսթոնիոյ, Իրաքի, Իրանի, Լիթուանիոյ, Լիպիոյ, Ռումանիոյ, Սլովաքիոյ, Սուտանի եւ Վենեզուելայի դիւանագիտական ներկայացուցչութիւններու ղեկավարները:

Շուշի հրաժարած էր այցելել նաեւ Ատրպեյճանի մօտ Մեծ Բրիտանիոյ դեսպանը: «Ազատութիւն»ի հարցման ի պատասխան, Հայաստանի մէջ Մեծ Բրիտանիոյ դեսպանութիւնը հաստատած է, որ Պաքուի մէջ բրիտանական դեսպան-

նութեան ոչ մէկ ներկայացուցիչ չէ մասնակցած Յուլիս 9-10-ի Ատրպեյճանի կառավարութեան կողմէ Լեւոնային Ղարաբաղ կազմակերպուած այցին:

Մեծ Բրիտանիան լուրջ ներդրումներ ունի Ատրպեյճանի մէջ, եւ բրիտանացի դեսպանի այս որոշումը առնուազն հետաքրքիր է:

Պատերազմէն յետոյ Ատրպեյճանի նախագահը անընդհատ կը կրկնէ, թէ Ղարաբաղեան հակամարտութիւնը կարգաւորուած է, եւ Մինսքի խումբը այլեւս ընելիք չունի: Իսկ Մինսքի խումբի համանախազահ երկիրները անընդհատ կը յայտարարեն Ղարաբաղեան խնդրի շուրջ բանակցութիւնները պէտք է շարունակել՝ համապարփակ կարգաւորման հասնելու համար: Ընդ որում, Ուաշինգթոնի եւ Փարիզի մօտեցումները այս հարցով նոյնն են, իսկ Մոսկուան թէեւ կ'ըսէ, որ խնդիրը դեռ կարգաւորուած չէ եւ գործընթացը պէտք է շարունակել, սակայն կ'աւելցնէ, որ այսօր անոր ժամանակը չէ, նախ պէտք է ստեղծել վստահութեան մթնոլորտ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ, լուծել հրատապ հարցերը, ետքը անցնիլ համապարփակ կարգաւորման:

Այդուամենայնիւ, երեք դեսպաններու, ատրպեյճանական աղբիւրներու բնորոշման՝ տեմարչը խօսուն է եւ չափազանց զայրացուցած ատրպեյճանցիները: Ատրպեյճանի նախկին արտաքին գործոց նախարար Թոֆիք Չիլիֆոկարովը յայտարարած է, թէ անոնք անով կ'ահազանգեն, որ իրավիճակի կայունացումէն յետոյ մտադիր են բանակցութիւններ վարել Լեւոնային Ղարաբաղի կարգաւորման կիզբունքներու տրամաբանութեան համապատասխան: Ատրպեյճանի նախկին արտաքին գործոց նախարարը առաջարկած է պատժել այդ դիւանագետները եւ զիրենք չհրաւիրել որեւէ այլ միջոցառման, քանի դեռ չեն այցելած Շուշի: Աւելին՝ Չիլիֆոկարովը առաջարկած է պաշտօնապէս հրաժարիլ ԵԱՀԿ Մինսքի խումբէն:

«Ատրպեյճանը ցոյց պէտք է տայ իր միանշանակ դիրքորոշումը եւ հրաժարի ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախազահութեան հիմնարկէն: Եկած է այդ քայլը կատարելու ժամանակը», - ըսած է նախկին արտաքին գործոց նախարարը:

Երոպական Միութիւնը Հայաստանին Յատկացուելիք Ներդրումային Ծրագիրը Բարձրացուց 2,6 Միլիար Եւրոյի

Արեւելեան գործընկերութեան ծիրէն ներս Հայաստանը Հարաւային Կովկասի մէջ Եւրոպական Միութեան կողմէ ամենալայնածաւալ աջակցութիւնը ստացած երկիրն է, այս մասին յայտարարեց փոխվարչապետի պաշտօնակատար՝ Մհեր Գրիգորեան, Եւրոպական Յանձնաժողովի հարեւանութեան եւ ընդլայնման հարցերով յանձնակատար՝ Օլիվըր Վարճէիի հետ կապուած հանդիպումէն յետոյ:

Եւրոպական Միութիւնը յառաջիկայ 5 տարիներուն համար Հայաստանին յատկացուելիք 1,6 միլիար Եւրոն այլ աղբիւրներով կ'աւելցնէ 1 միլիարով՝ ընդհանուր ներդրումային փաթեթը դարձնելով 2,6 միլիար Եւրո: Ներդրումային փաթեթի ծաւալով Հայաստանը առաջ կ'անցնի Ուքրանիայէն՝ 1,94 միլիար եւ Մոլդովիայէն՝ 1,63 միլիար Եւրո փաթեթով: Ամենաքիչ աջակցութիւնը կը տրուի Ատրպեյճանին՝ 140 միլիոն Եւրո: Ֆինանսական օժանդակութեան նպատակը համատեղ մշակուած ներդրումային եւ տնտեսական նախագիծերու իրագործումն է:

Տարածաշրջանային այցը Եւրոպական յանձնաժողովի յանձնակատարը սկսած էր Վրաստանէն եւ կ'աւարտէ Հայաստան: Մինչ այդ եղած է նաեւ Ատրպեյճան: Հայաստանի մէջ յանձնակատարը պաշտօնական հանդիպումներ ունեցած է, անոնց կարգին՝ նախագահի, վարչապետի ու փոխվարչապետի պաշտօնակատարներուն հետ: Անդրադարձած են 2020-ի ընթացքին ի յայտ եկած ծանր մարտահրաշարներուն՝ կարեւորութիւն տալով Ատրպեյճան գտնուող ռազմագերի-

ներու ու քաղաքացիական անձերու առանց նախապայմաններու ու անյապաղ վերադարձին, հանդիպումէն մանրամասնութիւններ ներկայացուցած է փոխվարչապետի պաշտօնակատարը:

«Յանձնակատարի հետ քննարկել ենք Արցախի դէմ լայնածաւալ ռազմական յարձակումի ծանրագոյն հետեւանքների եւ յետպատերազմեան իրավիճակի մեղմանն ուղղուած մեր հետագայ գործողութիւնները: Հայաստանը յանձնառու է Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորմանը բացառապէս խաղող ճանապարհով», - ըսաւ Գրիգորեան:

Մօտ ապագային, Եւրոպական միութիւնը նաեւ 9-10 միլիոն Եւրոյի մարդասիրական օգնութիւն կը տրամադրէ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան տուժած անձերուն, ըսաւ յանձնակատարը: Բացի այդ Եւրոպական միութիւնը պատրաստ է աջակցիլ Ատրպեյճանին եւ Հայաստանին տարածաշրջանին մէջ երկարաժամկէտ խաղողութիւն հաստատելու հարցով: Օլիվըր Վարճէին այս մասին խօսած էր Պաքուի մէջ եւ վերահաստատեց նաեւ Երեւանի մէջ:

«Կ'ուզեմ վերահաստատել, որ Եւրոպական Միութիւնը պատրաստ է շատ աշխույժ դերակատարում ստանձնել հակամարտութեան մարտական գործողութիւններուն յաջորդած իրավիճակին, աջակցելով վստահութեան ամրապնդման միջոցառումներու իրագործման, յատկապէս առաջին հերթին յաղթահարելու համար մարդասիրական ճգնաժամը», - ըսաւ Օլիվըր Վարճէին:

Օրակարգի Վրայ Հարցերու Հարցը

Շարունակուած էջ 1-էն

ըր հանդէս են եկել յայտարարութեամբ, ըստ էութեան, արձանագրելով այդ օրակարգը, որպէս աշխատանքային օրակարգ: Եւ մենք, պէտք է այստեղ նոյնպէս մեր անելիքները ճշգրտենք, նոր իրադրութեան մէջ փորձենք որոշակի ռազմավարութիւն որդեգրել եւ մեր նպատակներին հասնելու ուղիները մատնանշել», - ընդգծած է Փաշինեան:

Արցախի նախագահն ալ իր հերթին արձանագրած է, - «Այսօր ընկերային քաղաքականութիւնը թոյլ է տալիս վստահ յայտարարել, որ չկայ ընտանիք, որը չի եղել ուշադրութեան կեդրոնում, եւ միանշանակ այդ ամէնը միայն ու միայն Հայաստանի կառավարութեան կողմից յատկացուած գումարների շնորհիւ: Իսկ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաւաքագրած գումարներն արդէն իսկ սկսել են ուղղուել բնակարանաշինութեանը եւ ենթակառուցումներին զարգացմանը: Այսօր Արցախը մի մեծ շինհարթակ է: Ծրագրերը պէտք է շարունակել եւ առաջին հերթին՝ բնակարանաշինութիւնը, որը մեր զլխաւոր խնդիրն է: Այսօր Արցախում բնակարանների խնդիրն այնքան խիտ է, որ օրը մէկ բնակարան կառուցելն էլ քիչ է: Մեր ծրագրերն իրականացնելու համար պէտք է հասնենք նրան, որ առնուազն օրը մինչեւ 4-5 բնակա-

րան կառուցենք: Այդ ծրագիրն ենք ուզում ներկայացնել հայութեանը, որպէսզի ամէն մի հայ առաջիկայ տարիներին մասնակցի բնակարանաշինութեան ծրագրերին», - աւելցուցած է Արցախի նախագահը:

Արայիկ Յարութիւնեան նաեւ ընդգծած է, որ Արցախի ամենակարեւոր խնդիրը անվտանգային, կարգավիճակի խնդիրն է:

«Եւ, բարեբախտաբար, կարգավիճակի առումով սկզբունքն ինչպիսին եղել է մինչ պատերազմը, ԵԱՀԿ Մինսքի խումբի կողմից օրակարգային փոփոխութիւն չի կրել: Մենք պէտք է ձգտենք, որ դա մնայ օրակարգում: Ձեր բոլոր յայտարարութիւնները, մեր յայտարարութիւնները, որ Արցախի անկախութեան ճանապարհը քննարկման ենթակայ չէ, վկայում է այն մասին, որ պէտք է շարունակենք մեր պայքարը: Իսկ անվտանգութեան առումով, ուզում եմ վստահեցնել, որ Պաշտպանութեան բանակի եւ խաղաղապահ ուժերի կողմից իրավիճակը համատեղ վերահսկուած է: Իրականում բարդ է աշխարհագրութիւնը, բայց, բարեբախտաբար, որեւէ լուրջ մտահոգող խնդիր չի եղել: Այսօր ընթանում է բերքահաւաք, որեւէ խնդիր կամ խոչընդոտ չկայ: Ընթանում են նաեւ ենթակառուցումները փոխարինելու համար այսօրուայ շփման գծի երկայնքով», - ըսած է Յարութիւնեան:

Արմենակ Արմենակեանի Կինը Դիմած Է Ռոպերթ Քոչարեանին «Մինչ Այսօր Կը Սպասենք Մեր Հարցերու Պատասխանին»

Հոկտեմբեր 27-ի գոհերէն Եուրի Բախշեանի այրին՝ Անահիտ Բախշեան օրերս բաց նամակով դիմած էր Ռոպերթ Քոչարեանին: Բախշեան Ռոպերթ Քոչարեանին, որպէս ԱԺ պատգամաւոր, քանի մը հարց առաջադրած էր կապուած Հոկտեմբեր 27-ի գործի բացայայտման հետ:



Արմենակ Արմենակեանի այրին Արմինէ Արմենակեան

«Յիշում էք 1999 Նոյեմբերի վերջին դուք եւ տիկին Պելլան ընտանիքիս ցաւակցութիւն յայտնելու նպատակով եկաք մեր տուն եւ նախապէս որոշուած կէս ժամի փոխարէն մնացիք մէկ ժամից աւելի: Դուք խօսեցիք ահաբեկչութեան կազմակերպիչներին ամէն գնով բացայայտելու անհրաժեշտութեան մասին եւ երբ ես ասացի, որ եթէ չբացայայտէք՝ ժողովուրդը ձեզ է կասկածելու: Դուք ասացիք՝ ԳԻՏԵՄ»:

Նշանակուած է գիտէք, որ ժողովուրդը 22 տարի ապրում է ձեր նկատմամբ այդ կասկածով: Անցել է 22 տարի եւ ահաբեկչութեան կազմակերպիչները չեն բացայայտուել ո՛չ ձեր, ո՛չ Սերժ Սարգսեանի նախագահութեան օրօք: Իսկ դրանք կան, քանի որ, մասնաւորապէս դատարանն այդպէս էլ չբացայայտեց Արմենակ Արմենակեանի սպանութիւնն այն դէպքում, երբ հենց դատարանում դատախազ՝ Յակոբ Մարտիրոսեանն ապացուցեց, որ Արմենակեանին չէին կարող սպանել ահաբեկչութեան ձեռքակալուած, ապա դատապարտուած մասնակիցները, քանի որ նրանք այդ պահին ԱԺ դահլիճում էին: Ո՞վ ԱԺ նիստերի դահլիճի միջանցքում սպանեց Արմենակեանին, 22 տարի է այս հարցը կախուած է մեր արդարադատութիւն գլխին», - նամակով գրած է Բախշեանը եւ աւելցուցած. «Դուք էիք Երկրի անվտանգութեան թիւ 1 պատասխանատուն, ձեր օրօք գլխատուեց մեր պետութիւնն ու պետականութիւնը, որի հետեւանքն այսօրուայ իրականութիւնն է եւ դուք ոչինչ չարեցիք, ընդհակառակը՝ ամէն ինչ արեցիք դատաւարութիւնը շեղելու համար, կարեւոր վկաները վերացուեցին, դատարանում չհարցաքննուեցիք: ԻՆՁՈՒ՞Ց»:

Անահիտ Բախշեան Քոչարեանին երեք հարց առաջադրած է: «Եթէ գիտէիք, որ չբացայայտելով Հոկտեմբեր 27-ի կազմակերպիչներին դուք կը հաստատէք ձեր նկատմամբ ժողովրդի մէջ եղած կասկածը, ինչո՞ւ չպահանջեցիք արդար նախաքննութիւն եւ դատաւարութիւն»:

ԻՆՁՈՒ՞Ց 2004-ի Նոյեմբեր 11-ին կայացուեց կազմակերպիչներին մասով «մայր» գործից անջատուած մասը կարճելու որոշումն ու այդպէս էլ ուղեցիք թաղել ամէն ինչ:

Որպէս պատգամաւոր պատրաստուում էք հետեւել այս գործի վերաբացման ընթացքին»:

Հոկտեմբեր 27-ի առեղծուածային պայմաններում մէջ սպանուած Արմենակ Արմենակեանի այրին՝ Արմինէ Արմենակեանը «Առաջին լրատուական»-ի հետ գրոցին ըսաւ, որ ինքը համակարծիք է Բախշեանի հարցադրումներուն հետ: Ըսաւ, որ եղած են դէպքեր, երբ ինքը նոյնպէս հարցեր բարձրացուցած է, բայց այդ բոլոր հարցերը մնացած են անպատասխան. «Հիմա ես դէմ չեմ, եթէ այդ հարցերը մի

արդիւնք կու տան, թող նորից հնչեցուեն: Ես էլ կ'ուզենայի պատգամաւոր Քոչարեանից հետաքրքրուել Արմենակեանի սպանութեան հանգամանքներին: Իրենք ասում են, որ կարէն Յունանեանի հրագնից է սպանուել: Բայց դատի ժամանակ կարէն Յունանեանն ասեց, որ ինքը չի եղել: Ու մինչեւ հիմա չգիտենք այդպէս էլ, թէ ով սպանեց Արմենակին»:

Ես այդ հարցի պատասխանը կ'ուզենամ իմանալ: Կ'ուզենայի պարզել առաջինը թէ ում էր խանգարում Արմենակեանը: Այս հարցերը մինչ օրս հետաքրքրում է մեր ընտանիքին ու բոլորին», - ըսաւ տիկին Արմենակեանը՝ աւելցնելով. «Տարիներ շարունակ մեզ համար այնպէս է Քոչարեանը ինչ գիտեր Հոկտեմբեր 27-ի մասին, ճիշտ էր այդ օրերի խօսակցութիւնները, թէ ոչ: Բայց ես ինքս փաստեր չունեմ ու չեմ կարող ասել, թէ Քոչարեանը մեղաւոր է, թէ ոչ: Կ'ուզենայի, որ դատաւարութեան ժամանակ փաստերով բացայայտուէր իրականութիւնը: Բայց իրենք ընդհանրապէս չեն կայացան դատաւարութեանը, դատը շեղեցին: Բայց ինքը եթէ ոչ վկայի կարգավիճակով, այլ երկրի նախագահի կարգավիճակով պէտք է դարձնու պատասխան տար, թէ ինչու այդ օրը կատարուեց այդ ահաբեկչութիւնը: Հենց իրենց անտարբերութիւնը ժողովրդին ուղղեց իրենց մեղադրելու ուղղութեամբ: Իրենց անգամ դրանից յետոյ բացարձակ չհետաքրքրեց, թէ ինչպէս էին գոհերի ընտանիքները ապրում, ոչինչ չարեցին դատաւարութիւնը ճիշտ վարելու համար»:

Արմենակեանի խօսքով՝ Քոչարեանին պէտք է անհանգստացներ, որ իր նախագահութեան օրօք տեղի ունեցաւ ոճրագործութիւնը: Պէտք է անհանգստացներ այն փաստը, թէ ինչպէս ոճրագործները հանգիստ մուտք գործած էին Ազգային ժողով ու իրագործած այդ ոճիրը. «Եղել են կազմակերպիչներ, նրանց օժանդակողներ: Նրանք չէին կարող այդպէս անարգել մտնել երկրի ամենապահով տեղը ու գլխատել երկիրը»:

Եղել են մարդիկ, որոնք նրանց հանգիստ թողել են մտնել ներս: Հակառակ դէպքում այդքան գէնք ու գրահով մարդիկ չէին կարող ներս մտնել: Մի խօսքով դա կազմակերպուած սպանող է եղել ու մի օր պէտք է բացայայտուի այդ սպանողը: Կարծում եմ, որ եթէ հիմա իշխանութիւնը կամք ունի, ապա պարոն Քոչարեանը կարող է

Հակուած Ենք Մեծ Ներդրումներ Կատարելու Ետուարտօ Էռնեքեան



Նիկոլ Փաշինեան կը հիւրընկալէ արժանօրինակ գործարար Ետուարտօ Էռնեքեանին

Վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան հիւրընկալած է Հայաստանի ազգային հերոս, արժանթինահայ գործարար, բարերար՝ Էտուարտօ Էռնեքեանը:

Իր խօսքին մէջ Նիկոլ Փաշինեան, մասնաւորապէս, նշած է. «Յարգելի պարոն Էռնեքեան, ողջունում եմ ձեզ Երեւանում: Ուրախ եմ մեր հերթական հանդիպման համար: Ձեր այցը, այսպիսի հանդիպումները միշտ կարեւոր են, որովհետեւ դուք Հայաստանի Հանրապետութիւնում կարեւոր ներդրողներից մէկն էք եւ մասնաւորապէս՝ Սփիւռքի կարեւորագոյն ներդրողներից մէկը Հայաստանի Հանրապետութիւնում: Հետեւաբար՝ ձեր ներդրումային տրամադրութիւնները, կարծում եմ, կանխորոշում են նաեւ ընդհանուր ներդրումային տրամադրութիւնը Հայաստանի Հանրապետութիւնում»:

Մեր երկիրը շատ դժուար փորձութիւնների միջով է անցել: Ընդամենը օրեր առաջ՝ Յունիսի 20-ին տեղի ունեցած ընտրութիւններում, մեր կառավարութիւնը վերահաստատել է իր ունեցած մասնաւորապէս «Ապագայ կայ» կարգախօսի ներքոյ: Եւ յոյս ունեմ, որ ձեր աշխատանքային օրակարգն ու տրամադրութիւնը եւս ուղղուած է հենց մեր երկրի տնտեսական լաւատեսութիւնը եւ ապագայի նկատմամբ հաւատը վերականգնելուն: Այստեղ ձեր անձնական դերակատարումը շատ կարեւորում ենք»:

Իր հերթին, Էտուարտօ Էռնեքեանը շնորհաւորած է Նիկոլ Փաշինեանը ընտրութիւններուն «Քոչարեանից կայ» կարգախօսի կազմակերպեամբ եւ աւելցուցած է. «Պարոն վարչապետ, շատ զգացուած եմ ձեր խօսքերից: Ցաւօք, համաճարակը փոփոխութիւններ մտցրեց մեր բոլորի օրակարգում՝ թէ՛ ժամանակի, թէ՛ տարածութեան, թէ՛ չուերթների առումով, բայց, կարծես թէ, դա արդէն յաղթահարուած ենք, եւ ես այստեղ եմ»:

Պարոն վարչապետ, չէի ուզում, որ երկար ժամանակ անցնէր, ուզում էի հնարաւորինս արագ գալ

եւ ձեզ շնորհաւորել յաղթանակի կապակցութեամբ, որովհետեւ դա շատ կարեւոր է, եւ մենք ի սկզբանէ աջակցում էինք ձեր յաղթանակին:

Մենք Հայաստանում տարբեր ոլորտներում ենք ներդրումներ իրականացնում: Եւ հակուած ենք շարունակել, կատարել մեծ, լայնածաւալ ներդրումներ Հայաստանում: Հիմա բանակցութիւններ ենք վարում մի դրամատան հետ: Տեսնում ենք Հայաստանում զբօսաշրջութեան բնագաւառի լաւ աճ, եւ բարեբախտաբար, շուտով նոր ներդրում կ'առաջարկենք օդանավակայանաշինութեան բնագաւառում: Իմ գարմիկ Մարթինը, ով ներկայումս ղեկավարում է այդ ամէնը, շատ շուտով կը ժամանի Հայաստան, որպէսզի կապ հաստատի այն անձի հետ, ում դուք կը նշէք, բնականաբար, քննարկելու ներդրումային ծրագիրը:

Մենք պէտք է մեծ գոհունակութիւն յայտնենք Հայաստանում գինու եւ խաղողագործութեան բնագաւառի զարգացումների կապակցութեամբ, որ կարողացել ենք կանխատեսել, ներդնել եւ բարեփոխել այն: Բարեբախտաբար, այսօր այդ գինիները տարածուած են ամբողջ Եւրոպայում:

Ձեմ ուզում ձեզնից շատ ժամանակ խել, պարոն վարչապետ, ես ձեր տրամադրութեան տակ եմ»:

Նիկոլ Փաշինեան եւ Էտուարտօ Էռնեքեան քննարկած են Հայաստանի մէջ «Արմենիա միջազգային օդակայաններ» ՓԲԸ-ի կողմէ իրագործուող ծրագիրները: Մասնաւորապէս, անդրադարձ եղած է ընկերութեան կառավարման տրուած Երեւանի «Ձուարթնոց», Գիւմրիի «Շիրակ» օդակայաններու զարգացման, ենթակառուցուածքներու բարելաւման, վերանորոգման եւ հետագայ շահագործման վերաբերող հարցերը: Զրուցակիցները միտքեր փոխանակած են նաեւ Էտուարտօ Էռնեքեանին պատկանող ընկերութիւններու կողմէ Հայաստանի մէջ իրագործուող եւ առաջիկային նախատեսուող այլ ձեռնարկատիրական ծրագիրներու շուրջ:

օժանդակել, աջակցել Հոկտեմբերի 27-ի բացայայտմանը», - ըսաւ Արմենակեանի այրին:


Այն դիտարկման, որ կը հաւատա՞յ, որ Քոչարեանը կրնայ աջակցել եւ օժանդակել Հոկտեմբեր 27-ի բացայայտման, տիկին Արմենակեան պատասխանեց. «Մտածում եմ՝ գոնէ օգնի:

Եթէ իշխանութիւնը կ'ամենայ, ապա մտածում եմ, որ հնարաւոր կը լինի բացայայտել 27-ը: Մինչ այսօր մենք սպասում ենք մեր հարցերի պատասխանին, թէ ինչպէս եղաւ եւ ում ձեռքով գնացին մեր անուանի գործիչները: Բայց առանց իշխանութեան կամեցողութեան ոչ մի բան էլ չի բացայայտուի»:

Վեր. Արմենակ Չայկազեան Յիշատակուեցաւ Երեւանի Մէջ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Նախաձեռնութեամբ Պէյրուսի Հայկազեան Համալսարանի եւ գործակցութեան Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկին այսօր Միծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան թանգարանի մեծ դահլիճին մէջ տեղի ունեցաւ յիշատակի միջոցառում մը ձօնուած Աւետարանական գործիչ, աստուածաբան եւ բարերար՝ Արմենակ Յարութիւն Հայկազեանին (Ծն. 1870-ին Խարբերդ):



Հայտնութեան:

Ուշագրաւ է, որ այսօր սփիւռքի տարածքին գործող միակ հայկական՝ Հայկազեան Համալսարանը (Պէյրուսի մէջ) կը կրէ վաւերական գործիչին անունը:

"I want to confirm that the EU is ready and committed to take on a very active role on in the post-hostilities situation both as a facilitator of confidence-building measures ... and later on as a key partner in the economic recovery," Varhelyi told journalists.



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepyan@gmail.com

Ակնարկ Մը Երան Գույունճեանի Քերթողական Արուեստին



ԼՈՒՍԻՆԷ ԱԽԵՏԻՍԵԱՆ

Գոհութեամբ ստացայ եւ ձեռք առի չորս գիրքերու գեղեցիկ համալիր մը՝ Երան Գույունճեանի «Քառեակներ», «Հայերգութիւն», «Լուսէ անուրջներ», «Հոգևոյ հեքին հետ» հատորները, բոլորն ալ լոյս տեսած 2020-ին, երբ կը թուէր, թէ կեանքը կանգ առեր է աշխարհքին վրայ:

Անշուշտ, առանձին լուրջ ուսումնասիրութեան պիտի արժանացնել հատորները, սակայն հպանցիկ ընթերցմամբ իսկ բացայայտ կերպով կ'ընդգծուին անոնց բոլոր արժանիքները՝ սկսեալ նիւթի լայնածիր ու բազմաբովանդակ ընդգրկումէն մինչեւ ասելիքին կերպաւորումները ձեւին մէջ: Մարդը, անոր զգացումները, անոր կոչումն ու սա աշխարհին մէջ մարմնաւորուելուն նպատակը, բնութեան բերկրալից ձայներն ու գոյները, գմայլանքը անոնցմով, հայրենիքին տիեզերածաւալ սէրը, ազգին նախանշուած ճամբան մինչեւ Լոյս, Հայոց լեզուն, զոր տրուեցաւ՝ որպէս գանձ ու հուշիւն, հայը, մարդը, անոր առաքինութիւնները Լուսաւոր ու վեհ ամէն բան կ'ընդգրկէ քերթողին ուշադրութիւնը եւ կը դարձնէ ձգտումներու կիզակէտ: Մարդու ներսիդին թափանցելու հրաւերն ու խորհուրդը կայ եւ հոն ամբարուած լոյսը գտնելու խոստում:

Թէ որ խաւարը թանձրանայ, Մուքը դառնայ անտանելի, Իջի՛ր խորերը հոգիիդ, Լոյսի շողեր այնտեղ շատ կան: (Քառեակներ, էջ 24)

Շարք մը քառեակներէն ակնյայտ կը դառնայ, որ քերթողուհին կ'առանձնացնէ սիրտը՝ որպէս ամենէն նուրբ, խորագէտ ու սրատէս զգայարան:

Սիրտով ճանջցիր մարդ էակիմ, Սիտքն առանձին բաւարար չէ, Լոյսը կրնա՞ս միտքով տեսնել՝ Թէ չկրնաս գայն զգալ, ապրիլ: (Քառեակներ, էջ 16)

Քառեակը, որ միտքի խտացում ու բերկրացում կ'ենթադրէ, նաեւ պատիկ թատերաբեմ մըն է, ուր դերեր պիտի ստանան ամէնէն անհրաժեշտ ու բաւարար երեւոյթներն ու իրերը, յատկապէս որոնք ընտրած է հեղինակը՝ ըստ սեպհական արժէքներու. մարդու մը անհրաժեշտ ըլլալու են՝ միտքի լուսաւորումը, յոյսը, հրաշքի սպասումը եւ ջերմութիւնը: Եւ կը բաւեն «չիթ մը իմաստութիւն», «չող մը սիրալոյս», «գոլ մը գորովանք» եւ «բոյլ մը անուշ խօսք», որ մարդ մարդու մը ապրելու երջանկու-

թիւնը պարգեւէ, ինչպէս ենթադրելի է քառեակէն:

Երան Գույունճեանի քառեակները յաճախ հեղինակային առածներու հանգոյցներ են, ինչպէս հետեւեալն է.

Շի՛ք մ'իմաստութիւն միտք լուսաւորէ, Շո՛ղ մը սիրալոյս մարդը յուսադրէ, Գո՛լ մը գորովանք հրաշքն էր գործէ,

Բո՛յլ մը անուշ խօսք սիրտեր քերմացնէ:

Այս տողերը ժողովրդական բանահիւստութեան ցայժմ անյայտ ասացուածքներ ու առածներ ըլլալ կը թուին, որոնք կ'երթան համալրելու «Ձուրի կաթիլը քար կը ծակէ», «Քաղցր լեզուն օձը բունէն կը հանէ», «Ճիշդ խօսք մը հազար դուռ կը բանայ» եւ նման իմաստուն միտքերու ցանկը, որոնց ստեղծողը հազարամեակները հոլոված ժողովուրդն է, եւ անոր ստեղծածը համալրել քիչ հեղինակներ կը հաւակնին: Եւ այստեղ ակնյայտ բանաստեղծականութիւնը կը ցոլայ երեւոյթներու չափման ինքնատիպ միաւորներով՝ պատկերաւոր ու տպաւորիչ: Որո՞ւ միտքը պիտի փորձէր, իմաստութիւնը չափել շիթերով, սէրը՝ շողերով, խօսքը՝ բոյլերով (միայն Պ. Գուրեանը նայուածքը տեսած է բոյլով), իսկ գորովանքի ջերմաստիճանին չափման նուազագոյն նիշը «գոլ»-ն ընտրել: Այսպէս կը յայտածուի Երան Գույունճեանի ինքնատիպ գեղագիտութիւնը:

Նոյնպիսի քառակող կոթող մը եւս տեղին է բերել՝

Փառքը կ'անցնի, վա՛րքը կը մնայ, Կեանքը կ'անցնի, յո՛ւշը կը մնայ,

Մարդը կ'անցնի, գո՛րծը կը մնայ, Խօսքը կ'անցնի, գի՛րը կը մնայ: (Քառեակներ, էջ 23)

Եւ գուր չէր, որ այս քառեակը «քառակող կոթող» յորջորջեցի, քանզի ոչ միայն հնագոյն իմաստասիրութիւններու երեւոյթն ու հրապոյցն ունի այն, այլ եւ յղում կու տայ թեւաճող լատին այն միտքին, թէ «խօսքը կը թուչի, իսկ գիրը կը մնայ», եւ անորմով ամբողջ քառեակը իմաստասիրական հնագոյն արձանագրութիւններ պարունակող նախաքրիստոնէական յուշարձանի տպաւորութիւնը կը ստեղծէ:

Երան Գույունճեանի քառեակները երբեմն համեմատութիւններու վրայ կը խարսխուին, սակայն անոնք պարզ համեմատութիւններ չեն, այլ հեղինակի գաղափարին

արտացոլանքը ճանաչողութեան տարբեր հայեւորներու մէջ: Անոնք միմեանց մէջ վերանդրադառնալով՝ աւելի տարածական ու խոր կը ներկայացնեն հեղինակին միտքը, եւ բովանդակութիւնը կ'ամբողջանայ խաչաձեւ հիւսուածքին մէջ: Քառեակին պահանջն ու առաւելութիւնն է, որ սուղ տարածութեան մէջ գրողը յայտնաբերէ կենսափորձին խտացուցիչը:

Հոգևոյ խօսքը ես փնտռեցի Սեթելեթեալ բառերուն մէջ, Իմչպէս մարդը ես փնտռեցի Հազար ու մեկ հանդերձի մէջ: (Քառեակներ, էջ 18)

Գիրով յաւերժանալու միտքին հաւատարիմ՝ բանաստեղծուհին բոլոր իր խոհերը, մտորումները, խօսքի վերածած զգացումները գիրով ամրագրած է՝ նախ յաղթահարելով ինքզինք ճանչնալու ճամբան, ապա եւ թերթ առ թերթ ինքզինք ճանչնելով ընթերցողներուն:

Ան ճամարիտ ժառանգորդն է ազգային գրականութեան, որու հիմներն ու անկիւնաքարերը ճանչցած է խորապէս, ապա եւ ձգտումներն ու միտումները յստակաբէն տարրորոշած եւ անոր կերպաւորման ձեւերը ժառանգած: Քերթողուհին միշտ դէպի վեր ու միշտ դէպի լոյսը կը ձգտի, ակնյայտօրէն ան ուխտաւորն է Լոյսին: Ան մեր ուղին ու մեր բնոյթը կը բնորոշէ՝ ինչպէս իրմէ առաջ բնութագրած են մեր մեծերը: Թումանեան կ'ըսէ.

«Սենք ուխտ ունենք՝ միշտ դէպի լոյս

Ու գնում ենք մեր ճամբան... ..Սեր աչքերը՝ միշտ դէպի վեր՝ Դէպի լոյսը մեր ուխտի»:

Վարուժան, Մեծարեանց, Սիւնի մանթօ եւ բոլոր մեր քերթողները դէպի լոյսը կ'երթային, եւ անոնց սողերը տրոփուն են լոյսով: Երան Գույունճեանի քերթողական արուեստին ամէնէն ցայտուն տարրը լոյսն է իր բոլոր կերպարանքներով: Ան կ'երագէ կեանքը լուսատեսիլ, հայրենիքը, ուր լուսորդիներ կը ծնին, անոր սողերէն կը ցաթեն բոց ու նշոյլ, պսպղուն շող ու կայծկլտուն հուր, ճաճանչագեղ Արարչական լոյս... Ան «լուսապաշտ» կը յորջորջէ ժողովուրդը:

Եւ անոր քերթուածները ոչ միայն կը խօսին լոյսի մասին, ոչ հիացում ու սքանչացում կ'առնեն, այլ եւ մատնացոյց կ'ընեն եւ կը յիշեցնեն ազգին առաքելութիւնն ու նախանշուած ճանապարհը. «Դու անմահ Լոյսին յաւիտեան ճամբորդը»: (Հայերգութիւն, էջ 20)

Կամ՝ Ու թէ սայթաքիս դուն ուղեմուտի, Ճամբադ լուսաշող քեզ պիտի կանչէ.

Քանզի ուխտեալն ես դուն հաւատաւոր Լոյսի անասուեր ու ճաճանչագեղ...

(Հայերգութիւն, էջ 23) Եւ քերթողուհին կը տեսնէ շողացող այն գալիքը, ուր կատարելութեան ձգտումը՝ Լոյսի ճամբան, պիտի հասցնէ մեր ազգն ու իւրաքանչիւրս.

Ու պիտ սփռես լո՛յսդ հզօր գերթ լուսարծակ՝ Մտքի, սրտի եւ հոգիի փարո՛ս անմար,

Դարին մոլոր պիտ ներշնչես մորոգ հաւատք՝ Թէ մարդ էակն կրնայ իրօք Աստուածանալ...

(Հայերգութիւն, էջ 19)

«Հայերգութիւն» գիրքը ներշնչանքի յորմամբ յորինուած է, հոյակերտ կոթող մըն է այն՝ ձօնուած ազգին, հայրենիքին, հայրենին: Այնտեղ ամբողջ մեր մշակոյթին գորգը կ'երեւակուի բանաստեղծական անկեղծ ոգեշնչմամբ եւ պատկերներու, անուններու, հերոսական դրուագներու ոգեկոչմամբ: Այնտեղ հոծուած ձեւակերպումներ կան, որոնք անհնար է մոռնալ, քանզի ներապրած ճշմարտութեան գեղեցիկ մատուցումն են իրաւ, ինչպէս «Հայաստանին» բանաստեղծութեան առաջին տողը՝ «Դու արտաչափ, ներոյժդ՝ մեծ» (Հայերգութիւն, էջ 40): Այս պատիկ տողը կը պարագրէ Հայաստանն իր նիւթեղէն եւ հոգեւոր ամբողջ տարողութեամբ: Այս մէն մի տողը աւարտուն բանաստեղծութիւն է արդէն, միաժամանակ՝ գեղեցիկ հանելուկ մը: Ահա՛ ձեւակերպում մը եւս՝ «Ամէն մեկ հայ բջիջ մըն է/«Հայ» կոչուած մեծ առեղծուածին» (Հայերգութիւն, էջ 25): Այս տողն իսկ ինքնին աւարտուն ու ինքնաբաւ գործ մըն է, որ առասպելական նախապատմական շրջանին կը տանի միտքը՝ երեւակայութեան մէջ արթնցնելով նախահաւր կերպարը, որու մասնիկներն ըլլալու ենք:

Բանաստեղծն իր նուիրական իղձերն ու բաղձանքներն է պահ տուեր «Հայերգութիւն» գիրքին մէջ, այնտեղ նաեւ յայտնաբերեր է յաւերժանալու իր գաղտնիքն ու կերպը, որ երանելի է, իսկապէս, իւրաքանչիւր հայի համար.

...Գորովանքս տամ ամէն մեկ տարրիդ արեւապայծառ Եւ դառնամ հիւլէ մը անքակտելի քու լոյս էութեան:

(Երկիր սրբազան, Հայերգութիւն, էջ 41)

Բանաստեղծի հոգին այն շողակնն է, որու ցոլափոխանքներու մէջ կը կարգանք զգայուն սիրտի բոլոր թրթիւնները, ներաշխարհային պայծառ անդրադարձումները, որոնցմով կ'ամբողջանայ, կը լրուի բնութեանապաշտ, իմաստասէր, հայրենապաշտ, ազգասէր, հայրենապաշտ հայը: Անոր պաշտամունքը կը յորդի քերթուածներէն ու քառեակներէն:

Ամէն բանաստեղծութիւն հոյապակի մըն է՝ յաւերժանուած համադրութեամբ ապակիի ակնահաստի կտորներու, որոնց ընդմէջէն թափանցող պարզ ճառագայթը կ'երանգաւորուի քերթողուհոյն նուրբ ճաշակին համեմատ եւ ընթերցողի հոգեւոյն կը բաշխէ վայելքը յայտնաբերումին:

Հատորներու քառեակը տաճար մըն է՝ կառուցուած պաշտամունքային յենասիւններուն վրայ: Հոն այցելողը Երազամոյն տաճարին ուխտաւորը կ'ըլլայ եւ քերթութեան Ոգույն հրաշալի թեւածումին ակնաստեղծ...

***** (Լուսինէ Աւետիսեան՝ Գրակա-նագետ, գրաբարագետ, բանասիրական գիտութիւններու թեկնածու, ՀՀ ԳԱԱ Ս. Արեղեանի անուան գրակա-նութեան ինստիտուտ)

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Վարդավառի Տօնահանդես (Նուիրուած Աստղիկ Դիցուհուն)




ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Վարդավառ, Աստղիկ դիցուհու՝ գեղեցկութեան, սիրոյ, ջրի, պտղաբերութեան տօնահանդէս է: Այն տօնում են Ձատիկից 98-օրեր յետոյ: Վարդավառ, Նար Ծովինարի ջրի պաշտամունքի տօնահանդէս, արեւի կրակ ժպիտը, ծիածանի երբեքանգ լոյսը դէմքին Արմին-հայերի Աստղիկ դիցուհուն էր նուիրուած՝ Վարդավառին, Արմին-հայեր Աստղիկին նուիրել «Վարդ», իսկ «Վառ»՝ «լուսաւորում-բոցավառում» իմաստ ունէր: Վարդավառին, Արմին-հայերը արեւի կանթեղից վարուած վարդեր փռում իրենց տներ, լեռների լանջերի ջրի ակունքներում ծիսակատարութիւններ կատարում, ջրով օծում իրենց մարմինները: Նար Ծովինարի ջրերի շիթերին փարած արեւի լոյսից պայթած ծիածանի հազար գոյների ծաղիկներ նուիրում իրար: Սիրոյ խայտանքով աղանիներ էին երկիրը թոցրել, որ նրանց սիրոյ ճախրանքով արբենային, նրանց կտուցներին ծաղիկներ դրել, որ տանէին իրենց աստուածների տաճարներ: Տարօն գաւառի Աշտիշատ ականում Աստղիկին ու Վահագնին մեհեան էին պատել՝ «Վահէ Վահեան» մեհեան: Վահագնը այցի եկել նրան, սիրոյ կրակով սիրտը բոցել: Արմիններ հաւատացել, որ նրանց սիրոյ խրախճանքի հրավառութիւնից անձրեւ տեղացել, բարիքով ծովացել իրենց հանդերը: Վարդավառեան տօներին փրափոն ծաղիկներ ու իրենց բերքի երախայրիքն էին նուիրել Աստղիկ դիցուհուն: Մեհեանում Վահագնի ու Աստղիկի հարսանիք եղել, «Վահէ Վահեան» սենեակ գնալու ատեն «Լաւաշ Հաց» դրել Աստղիկի ուսին, Վահագն յաւերժութեան խորհրդանիշ նուազարկել դրանը, Աստղիկ նաեւ զարկել, հացն ընկել ուսից, հացը գետին ընկել... ողբացել էին աստուածները՝ Աստղիկ անգաւակ կը լինէր: Արմինա աշխարհի ծաղկանց լեռները իրենց սիրտն էին բացել, աղբիւրներ պայթել, նրանց ակներից յորդառատ ջուր ժայթքել: Ջրերը գրկել իրար, վազել դէպի արտեր, Արածանին էր այն: Լեռների լանջերն էին պատուել, Արածանիի ջրերին ճամբայ բացել, որոնք գնացել Մշոյ, Ալաշկերտի հանդեր՝ համբոյր ցօղել նրանց երեսներին, գնացել Բայու, Խարբերդ՝ հայրենի լեռների ողջոյնը տարել Եփրատ դրախտիկ գետին, նրա հետ գնացել ողողել հարաւի

դաշտեր, Շամիրամի կախովի պարտեզներ բարձրացել: Արմին-հայեր հազար-հազար տարիներ պաշտամունք էին նուիրել Արածանիի ջրերին: Նրա ակունքների մօտ էր իրենց զօրաբանակների բանակատեղի Շահապիւանը, այնտեղ էին իրենց Նաւասարդը ու արեւի կանթեղից վառուած վարդերի տօնը՝ Աստղիկ Դիցուհու Վարդավառը տօնախմբում: Արմինա-Հայաստան երկրից հարաւ գնացած Շումերներ ու Բաբելացիներ Արածանիի հովիտը «Դրախտիկ Երկիր» կոչել, այնտեղ էր դրախտը, այնտեղ էին Ագամն ու Եւան նրա սքանչանքը վայելել, ճողբել Արածանիի ջրերը, նրա փրփուրներից հազուստ կապել: Աւանդում են, որ աշխարհական արմիններ, մեհեանների քրմուհիներ, բաղնայանուհիներ գերեզմանի տաղերով, Աստղիկին իրենց ձեռքերի վրայ վեր պահած, Նար Ծովինարի հետ գնացել Արածանիի ափեր: Վերեւ բարձրացրել Աստղիկին, Միհրի լոյսով ցօղել, ապա երեք անգամ իջեցրել վագող ջրեր, օծելու նրան Նար Ծովինարի արգասաւորութեան օրհնանքով: Վերադարձել բացատ, Աստղիկին դրել Վահագնի բազկատարած թեւերին, արեգակունք աչքերով այլել Աստղիկի դէմքը, սեղմել իրանին, մշուշոտ հանդերձը ետ տալիս, խարտեաշ վարսերով լիքը լանջն էր գգուել: Աստղիկին նուիրուած Վարդավառի տօնախմբութիւն, թմբկահարներ, փողահարներ, թմբուկ զարկում, ծիրանափողեր հնչում, քրմուհիներ Արմինայի Տիր աստուծոյ բնութեան սքանչանքին ձօնուած տաղերի երգեր ասում: Թագաւորը, իշխանները, վասպուրներ իրենց տիկնանց ու աշխարհական մարդկանց հետ եկել Արածանիի ափերի հաւաքատեղի բացատ: Առանց դասի խորութեան, բազում բոլորակ շարքեր կազմել, նրանց եզրերին՝ որդան կարմիր հագուստներով, կրակավառ թաշկինակը վեր պահած թագուհին էր: Ջարկել էին թմբուկները, հնչել նուազարանները, քրմուհիները որոտաձայն երգերով ընկերակցել նրանց: Թագուհին, փերիների նման ճախրել, վեր պարզած թաշկինակները գեփիւռի հետ օրօրուելով, հրդեհուած է բացատը, պարի ելած մարդկանց ելեւէջներով ալիքում է բացատը, դողում է բացատը: Եւ յանկարծ, զահագնը Աստղիկին ու Նար Ծովինարին յաղթ բազուկների վրայ վեր պահած, մտնում բացատ: Միհր աստուածը, երկնակամարի կապույ-

տին բազմած ժպտում էր, լոյս վարարում պարողների վրայ: Մասուկացել էին թմբուկների զարկերը, ահագնացել նուազարանների հնչունները, նրանց ելեւէջների խինդից պարի ելած արմինները՝ աւելի ուժգին զարկել գետինը, բացատն էր իրենց հետ օրօրուել, Արածանիի ջրերն էին իրար զարկել, փշրուել, լոյսի հեղեղ վառել Արմինա երկրում, վարդավառեան ողջոյն տարել հարաւի ցեղակիցներին: Ո՞վ դու արարչական Արմին-Հայ արի մարդ, քու հանգրուանած երկրում Վարդավառ տօնախմբի՞ր, Աստղիկի ու Նար Ծովինարի իմաստութեան լոյսի պատուները հօսի՞ր գաւակներից սրտերին, որ նախնիներիդ Արա աստուծոյ կրակի ու լոյսի բոցերով վառուեն նրանց հոգիները: Մանչերիդ հետ գնա՛ Միհրի արեւի տաճար, նրա առաջին լոյսի շողերով ցօղի՛ր նրանց աչուկները, թեւերիդ վրայ նրանց պահած բարձրացի՛ր՝ մեհեան, ատուղան, Արա աստուծոյ կրակի լոյսը ցանիւր նրանց դէմքերին, որ այնտեղ վառուէին նախնիներիդ հին հաւատքի աստուածների ոգեղէն հուրը: Արմին-Հայ մարդ, չե՞ս հաւատքում, մի պահ գոցի՛ր ակներդ, պատուի՛ր երեւակալութեանդ պատառները, քեզ էլ տեսնելու ես նախնիներիդ Վարդավառի պարի ելած, հաւատքա՛ց եղիդ յաւերժութեանը: Փլոււմ էին պարերի կլոր շարքերը, թագաւորը,

լանցուկ արած արքան, իշխանագուններ, նրանց հետ բազում աշխարհական մարդիկ, իրենց լեռների լանջերի վարդերի ու ծաղկունքի փունջեր վեր պահած՝ մօտեցել Աստղիկին ու Նար Ծովինարին: Ծաղկունք հոսել նրանց իրաններին, ծաղկեղջիթներ կախել նրանց պարանոցներից: Աշտիշատի աստուածները իմացել էին, որ արեւ աստուած Միհրը եկել՝ նրանց վրայ հազար գոյների ծիածան հանդերձ կապել: Աշխարհական մարդիկ, բոլորին, բոլորին կանչել բացատ, իրենց մարաններում հասունացած կարմիր կրակ գինի լցրել նրանց թասերին, առանց դասի խորութեան այն զարկել իրարու, «Ողջ Լեռուք» կենաց մաղթել, գինի-գինի ըմպել, արբեցել, գինի շող տուել իրար վրայ, գինի ցօղել Աստղիկի ու Շովինարի վրայ, որոնց իրաններից կարմիր կրակ էր շիթ-շիթ հոսում: Շովինարից խնդրել նուառ ջուր հոսել իրենց «Սրբազան Լեռնաշխարհ»-ի հանդերին, Աստղիկին խնդրել, արգասաւորութիւն, պտղաբերութիւն լինէր Արմինա աշխարհում: Արմինա աշխարհի արեւորդիներն էին իրենց աստուածներին մարդացրել: Վարդավառ: Աստղիկն էր բացատ ելել, բոլորը-բոլորը կլոր շարքերով խմբուել նրա շուրջը, ծիրանի փողերը բնութեան հեւքի մեղեդիներ էին հնչել: Աստղիկը, արեւահուր վարսերը ետին հոսած,



ըր, թագուհին, իշխանագուններ, աշխարհական մարդիկ ողջագուրուում, ժպտազին համբոյրներ շաղում իրարու քրտնաթոր, արեւած կարմիր երեսներին, բարի Վարդավառ մաղթում Աստղիկին, Վահագնին, իսկ Նար Ծովինարին՝ ջրի արարման յաւերժութիւն: Վարդավառ էր, կարել էր այգայէս: Արմինների շէնքի մարդիկ բացատը լցնում իրենց հետ բերած կթոցներով լի մրգերով, կեղրոնում շարում գինիով լեցուն կուժեր: Վարդավառ էր, նրա արթնած իմաստութեամբ, գինիով պիտի արբենային: Արջառներ են գոհաբերում Աստղիկի ու Նար Ծովինարի առաջ, արիւն հեղում նրանց ճակատներին: Վարդավառ: Հայոց «Սրբազան Լեռնաշխարհ»-ի լանջերին վառուող ծաղկունքի, նրա հովիտներում արեւող կարմիր վարդերի, սիրոյ ու գեղեցկութեան աստուածուհի՛ Աստղիկի ու Նար Ծովինարի դիցուհու ջրերի արարման փառաբանման Վարդավառեան կենարար ջրին նուիրուած տաղեր էին յօրինել, գմայլել իր երգեր ձօնել, որոնց հէքիթաթային արարումների սքանչանքից՝ արմինների սրտերին սարսուռի դող իջել, հրճուալից ծիծաղել էին: Վարդավառ: Թագուհուն թե-

մշուշոտ հանդերձը իրանին՝ մենապարի ելել: Հովիկների նման մեղմիկ հոսում էր իրանը, գեփիւռի թովչանքից Տուշպուէա ծովակի ալեակների նման փրփրում, Միհր աստուծոյ լոյսի շողերից հալում մշուշոտ հագուստը, լուսնի անուշ դէմքով սպիտակ իրանն էր արեւագլի լոյսի նման ժպտում: Նար Ծովինարն էր սափորու ուսին մօտեցել Աստղիկին, ջուր հոսել իրանին, պարման-պարմանուհիներին կանչել գալ Աստղիկի իրանից շիթերով հոսած ջուրը ըմպել: Վարդավառ: Աստղիկ, Նար Ծովինար բոլորին-բոլորին տանում Արածանի ափեր, կանչում մտնել ջրեր, ափերով, թասերով ջուր ցանել իրար վրայ: Պարմանները, պարմանուհիների իրաններից հոսած ջուրն էին այնպէս ըմպում, ճողբում Արածանիի ջրեր, անցել միւս ափ՝ արգասաւորութեան հրավառութիւն տօնախմբել: Հայ պատմիչներ, հրաշապատումներ վկայել Աստղիկ դիցուհու ու նրան նուիրուած Վարդավառի մասին: Այսպէս, Նաւասարդեան խաղերին ու Վարդավառին մասնակցել էին նաեւ արմինների հին աստուածները ուժ, իմաստութիւն յորդել տօնախմբութիւններին: Նա-

Լուրեր Մահակ Մեսրոպ Վարժարանէն



Համաճարակի որոշ չափով հեռացումը պատճառ դարձաւ եւ արթնացուց մեզ, որ ձերբազատուինք եւ դիմաւորենք ուրախ, առողջ եւ փայլուն օրեր, մասնաւորաբար վաճկելու մեր սիրասուն փոքրիկներուն կատարումները:

Այս գեղեցիկ առիթը օգտագործելով դպրոցիս տնօրէնուհին Տիկ. Մ. Պոյաճեանը հրաշալի գաղափար մը ունեցաւ բացառիկ եւ գրաւիչ յայտագրի մը գործադրութեան:

Յունիս 18, 2021-ի երեկոյեան, դպրոցիս բակը եռուզերի մէջ էր, միեւնոյն ժամանակ յարգելով ապա-

ներով հանդէս եկան հոգեշունչ եւ հայեցի մօտեցումով, խանդավառութիւն ստեղծելով ներկաներուն հոգիներուն մէջ հաւատարմով հայկական դպրոցին առաքելութեան: Ութերորդ կարգի աշակերտները ներկայացուցին նաեւ թատրոն մը:

Բոլոր աշակերտներն ալ իրենց պարտականութիւնները կատարեցին ինքնավստահութեամբ: Գնահատելի էին պարուսպներուն, երաժշտութեան եւ հայերէն լեզուի ուսուցիչներուն աշխատանքը, որոնք մեծ նուիրումով իրենց ներդրումը բերին այս յայտագրի յաջողութեան եւ վերելքին:



հովութեան օրէնքները: Նախակրթարանի եւ Միջնակարգի աշակերտութեան մասնակցութեամբ Տիգրի Լէնտի յայտագրէն քաղուած երգեր եւ պարեր ներկայացուցան գեղեցիկ տարագներով, որոնք պահ մը բեմին փայլքը աւելցուցին, հանդիսատեսը փոխադրելով Տիգրի Լէնտի:

ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՄՆԵՐ
Ք. Սարեան Մանկամտերի ամալերջի հանդէսը տեղի ունեցաւ 25 Յունիս 2021-ի յետմիջօրէին: Այդ օր դպրոցին բակը նոր կեանքի կոչուած էր ընդունելու ծնողներ, եւ հարազատներ, որոնք եկած էին վաճելու իրենց փոքրիկներուն դողդոջուն շրթներէն լսելու հայե-



Չմոռնալով մեր հայ մշակութիւնը եւ հայապահպանումը վառ պահելու մտահոգութեամբ աշակերտները՝ հայրենասիրական եւ գարնանային երգերու փունջ մը ներկայացուցին, դարձնելով երեկոն հաճելի եւ գոյութիւն, հրապուրելով ներկաներուն ուշադրութիւնը: Խմբային արտասանութիւն-

րէն եւ անգլերէն երգեր, սաղմոսներ, արտասանութիւններ եւ դիտելու տեսակաւոր պարեր: Փոքրիկները ժպտուն դէմքերով, գոյնգոյն հագուստներով պարեցին եւ այցելեցին աշխարհի տարբեր շրջանները իրենց հաճելի ներկայացումներով: Ք. Սարեան Մանկապարտէջի

Վարդավառի Տօնահանդէս

Շարունակուած էջ 13-էն

ւասարդեան խաղերի աւարտից յետոյ, Արածանիի ամբիւր Վարդաստանների վրայով ճախրելու ատեն Աստղիկի ոտքին փուշ հպել, նրա կրակ արիւնը հոսել էր սպիտակ վարդերին, կարմիրով ցողուել նրանց թերթիկները: Աստղիկի գեղեցկութեամբ, սիրոյ բոլորով ժպտացող վարդ, թագուհին ծաղիկների, նրա բազմած ստիակները Աստղիկի գեղեցկութեան համանուագն են հնչում:

Իրիկնադէմին, Աստղիկը Տարօն աշխարհի Գրգուռ լերան ձիւնահալ ջրերի գետակի փրփուրներում լողանք ընդունել: Նրա մարմինի լոյս գեղեցկութեամբ սքանչանալու համար, պարմանները մօտակայ բլուրների վրայ խարոյկներ վառել: Աստղիկը գետահովիտը մշուշով պատել, որ նրանց զրկէր իր մարմնի լուսնեակի դէմքի գեղեցկութեան հրայրքից: Այդ վայր Մշուշ կոչել, յետոյ էլ Մուշ, Մշոյ Դաշտ, Մշոյ Աղջիկ, Մշոյ Առաքելոց վանք, Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ, Սասնա լեռների դիւցազնածին մշեցիներ:

Մուշ, Արմինա երկրի Մուսասիր-Արդուինի քաղաքն է այն, որտեղ «Հայկ Գերագոյն Փառաց Տաճար»-ը՝ փառայեղ «Մուսասիրի Տաճար»-ը, սիւնազարդ կամարակապ տաճարն էր: Սարգոն ասորեստանցին փլել էր այն, գերել Խալտի-Հայկ ասորեծոյ ոտկեծոյլ արձանը, նրա նմանակը իր ձեռքին պահած պատուիրել քանդակել աղիւսի սալիկի վրայ: Մուսասիրը վկայ, աշխարհում կառուցեցին ու դեռ կառուցում են իր նման սիւնազարդ տաճարներ: Այն նրա փառքի յաւերժութիւնն է:

Աստղիկը, իր տաճարի ծաղկաստանների աստղերի կրակ շաղով վարդաթերթեր սփռել Արմինա աշխարհի վրայ, որոնք թաքուն հայելով հայոց հարսերին, իրենց ցեղին ընծայել Աստղիկի գեղեցկութեան հմայքով սիրուն դուստրեր, ահա թէ ինչու են ցեղի

աղջիկները այդքան սիրուն:

Վարդավառ: Յիսուս, աշակերտներ Պետրոսի, Յովհաննէսի ու Տեառնեղբայր Յակոբի հետ աղօթելու գնացել «Թափօր Լեռ»: Աւանդել էին, որ արեւի նման պայծառացել էր Յիսուսի դէմքը, գրուցել էր ամպերից դուրս ելած Մովսէս ու Եղիա մարգարէների հետ: Երկինքն էր պատուել, ամպրոպել երկինքը, որոտացել երկինքը, Աստուծոյ ձայն էր հնչել, որ Յիսուսը իր գաւակն էր, մարդիկ լսէին նրա պատգամները: Աստղիկին նուիրուած Վարդավառեան տօնը փոխակերպել են Յիսուսի Պայծառակերպութեան-Այլակերպութեան տօնին, այդպէս էին արել, որ մարէին Աստղիկի Վարդավառի յուշը: Արմինաների նոր պաշտամունքը երբեք չկարողացաւ իրենց սրտերում մարել նախնիների աստուածներին նուիրուած տօնախմբութիւնները՝ Վարդավառ, Նաւասարդ, կրակի, լոյսի, ջրի, ծաղիկի, բերքի, արգասաւորութեան տօների յուշը:

Թմբեկահար Կիրակոս, Մուսա լերան Խրտըրպէկ գիւղի Սօսիի ծառի ստուերին թմբուկ զարկում, Վարդավառ-«Վարդիվուր» էր: Եօղունսուրբները, Խրտըրպէկցիները, Վազրֆցիները այնտեղ էին: Սօսի ծառի շուրջը Մլքիներն, Սարաճենց, Նշանի, Մինաքի սրճարաններն էին: Օղի խմում, հարբում, ազգային ու կուսակցական երգեր երգում, որոնց հնչիւնները գնում հասնում Արածանիի ամբիւրի նախնիների Վարդավառի տօնահանդէսին: Մուսա Լեռցի գիտէր օղի խմել, գիտէր հարբել, յետոյ էլ ասորեանակը վեր պահած պիտի պարէր իր նախնիների մենապարերը ու շուրջպարերը: Սրճարաններից իջնում սօսի ծառի տակ, շուրջ պարեր, մենապարեր բռնում, իջնում գետակի ջրեր, ջրում ջրում իրար: Ես մանչ տղայ, դիտել եմ կամաւորական Կապորալ Արմենակ հայրիկիս մենապարը, ատրճանակը վեր պահած կրակում էր, իրեն հետ կրակում էին բոլորը, Լեշուիէ աւանի աղաւթներ կարծում էին **Աւանտ վեցերնեք թիւորս իրեն բքս լիւս:** խակրթարանի եւ Միջնակարգի շրջանաւարտները համապատասխան պարգեւներով գնահատուցան եւ ստացան իրենց վկայականները Տնօրէնուհիին եւ դաստիարակներուն ձեռամբ: Հանդէսի աւարտին գնահատանքի արժանացան Տնօրէնուհին, ուսուցիչները եւ հոգաբարձական կազմը, որոնք անսակարկ նուիրումով ծառայած էին բոլոր տարիին:

Տնօրէնուհին վեր առաւ դպրոցիս առաքելութիւնը, որ կը ջամբէ հայեցի կրթութիւն եւ հոգեւոր սնունդ: Ան շնորհաւորեց ծնողները: Բարի երթ մաղթեց շրջանաւարտներուն լաւագոյնը ցանկալով իրենց ապագայ ծրագիրներուն: Վարձքը կատար Տնօրէնութեան եւ պաշտօնէութեան: Նորանոր յաջողութիւններ եւ բարգաւաճում կը մաղթենք, որպէսզի այս դարբնոցը մնայ կանգուն եւ ծառայէ մեր գաղութին: Վերոյիշեալ բոլոր հանդէսներուն ծնողներուն կողքին ներկայ էին դպրոցիս հիմնադիրներէն Պրն. Մ. Երևանցեան, առաջին տնօրէն Պրն. Բ. Արոյեան, Ք. Սարեան Մանկամտերի բարերար Դոկտ. Մ. Սարեան, հոգաբարձուներ եւ բարեկամներ: Այսպիսով բոլոր յայտագիրները փակուեցան Պատուելիներ ձ. Մաթոսեանի վ. էքմէքճեանի եւ Մ. Մկրտիչեանի աղօթքներով: Սոնա Պատալեան

Հանգուցեալ Քրոջս՝ Արաքսի Մաճառեանի Ամփոփ Կենսագրութիւնը

Սիրելի սգակիր հարազատներ եւ բարեկամներ,

Իմ աննման քոյրս ծնած էր 1930, Ապրիլ 20-ին, Հայկական Կիլիկիոյ Ալեքսանդրէթ կոչուած ծովեզերեայ քաղաքը, որ կը գտնուէր ֆրանսական բանակի հովանիին տակ, սակայն քեմալական ուժերուն կողմէ գրաւուելով կոչուեցաւ Իսկէնտէրուն և որպէս այդպիսին կը ճանչցուի մինչեւ այսօր:

1938-1939 թուականներուն, Թուրքիան պարտադիր բռնագաղթի ենթարկեց Ալեքսանդրէթի տասնեակ հազարաւոր հայերը իրենց պապենական հայրենիքէն: Ֆրանսական ռազմաւաճակը զանոնք փոխադրեցին Սուրիոյ Թարթուս, Լաթաքիա եւ Քեսապ ծովեզերեայ քաղաքները, Լիբանանի Պէյրութ մայրաքաղաքի նաւահանգիստը, Եգիպտոսի Գահիթէ եւ Աղեքսանդրիա եւ այլ քաղաքները, Յորդանանի եւ Իրաքի զանազան շրջանները, և այլն:

Լիբանան աքորուած բազմահազար հայերու մէջ կը գտնուէինք նաեւ 10 տարեկան քոյրս եւ ես՝ 1939-ի Օգոստոս 16-ին գաղթի ճամբուն վրայ աշխարհ եկածս:

Պէյրութի Պուրճ Համուտ արուարձանի Թիրո եւ Սանճազ թաղերուն մէջ գետեղուած հայերը մեծ մասամբ Ալեքսանդրէթէն եկած էին: Հայրս՝ Առաքելը եւ մայրս՝ Լուսաբերը բնակութեան համար ընտրած էին Թիրո թաղը: Տիգրան եւ Բենիկ հօրեղբայրներու ընտանիքները՝ Սանճազ թաղը: Անոնք 1946-47 տարուան ներգաղթին մեկնեցան հայրենիք, ուր ներկայիս մեծ թիւով կ'ապրին մեր՝ Մաճառեան գերդաստանի շուռաւիղները: Իսկ մօրաքոյրս՝ Էլիզը, իր վարդենի, Սիրարփի եւ Մարո աղջիկներով հաստատուեցաւ Հաճընի մէջ. Մարոն իրենցմէ միակ վերապրողն է եւ մեր մէջ է այստեղ:

Արդ, շարունակելով գաղթականութեան պատմութիւնը, այդ շրջանին Թիրո թաղին մէջ կը գործէր Նուպարեան վարժարանը: Մայրս անմիջապէս աշակերտ կ'արձանագրէ քրոջս Նուպարեան վարժարանին: Հագիւ նախակրթարանի 5-րդ դասարանի աշակերտուհի, ինչ որ կատուի մը ու մուկի մը անակնկալօրէն իր վրան ցատկէլէն սարսափած, քոյրս ահագին արիւն կորսնցնելով, մահացու կերպով կը հիւանդանայ եւ կը փոխադրուի հիւանդանոցը եւ երկարատեւ հիւանդութենէն վերջ կը վերադառնայ բնական կենսքին:

Այլեւս դպրոց երթալէն դադարած, քոյրս հազիւ 15-16 տարեկան պարմանուհի, որպէս մանկախնամ ծառայութեան կը մտնէ՝ այդ օրերուն յայտնի մեծահարուստ՝ Ժիրայր Ծովիկեան ընտանիքէն ներս, ուր կը ծառայէ եւ մեծապէս օգտակար կ'ըլլայ մեր ընտանիքի գոյութեան պայքարին: 1955-ին անակնկալօրէն յանկարծամահ կ'ըլլայ:



Հայրս 56 տարեկանին: Քանի մը տարի ետք քոյրս կ'ամուսնանայ մեր գերդաստանի գաւակներէն Յաբէթ Մաճառեանի հետ: Միասին մտադրած իստուրթ մը կը բանան Պուրճ Համուտի Կիլիկիա թաղամասին մէջ և երջանիկ կեանք մը կը ստեղծեն: Ու ահա անսպասելիօրէն կը մահանայ ամուսինը՝ 37 տարեկանին, գոհ կ'երթայ քաղցկեղին եւ այրիացնելով քրոջս: Քոյրս յաւերժական սիրոյ խոստում տուած ըլլալով Յաբէթին, երբեք համուսնացաւ:

1969-ին ես եկայ Ամերիկա, Պոսթըն եւ յաջորդական տարիներու ընթացքին Ամերիկա բերի նաեւ մայրս, քույրս եւ եղբօրս ընտանիքին բոլոր անդամները, ջանալով հնարաւորինս օգտակար ըլլալ մօրս, քրոջս եւ եղբօրս ընտանիքին:

Աշխատասէր քոյրս, իր կարգին, եղբօրս գաւակներուն, Հայաստանի մեր ազգականներուն հետ ջերմ սիրով կ'ապուած, ամէն ձեւի՝ նիւթական, զգացական և գործնական եղանակներով մինչեւ իր մահը օգտակար եղաւ: Նոյնպէս, ան առատաձեռն կը մասնակցէր Մայր Հայրենիք Հայաստանին համար կատարուող բոլոր հանգանակութիւններուն:

Այսպիսի առաքինութիւններով օժտուած քոյրս իր մահականացուն կնքեց 2021 թուականի Յունիս 22-ին, Ատվէնթիստ հիւանդանոցին մէջ, սրտի կաթուածի եւ ասոր առնչուող զանազան ֆիզիքական տկարութեանց բերումով:

Սիրելի եւ անմոռանալի քոյր, դուն միայն մարմնով հեռացած ես մեզմէ եւ բոլոր հարազատներէդ, սակայն միշտ ներկայ պիտի ըլլաս մեր բոլորին յիշողութեան մէջ: Կ'աղօթենք, որ Բարերարն Աստուած, երկնային արքայութեան արժանացնէ քու ֆիզիքայէս բազմաչարչար բայց բարեսրտութեամբ լի հոգիդ:

Երթաս բարով: Ամերիկայի հիւրընկալ հողը թեթեւ գայ վրադ, աննման և անմոռանալի քոյր:

ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

Հայ Եկեղեցին Ու Քաղաքականութիւնը

Շարունակուած էջ 11-էն

«Պատասխանութեան ենթարկուելու առանց իրաւասութիւն ունենալու ո՛չ երբեք օրինաւոր եւ ներքին է, նոյնպէս իրաւասութիւն ունենալ առանց պատասխանատուութեան ո՛չ մի տեղ եւ ոչ մի օրէնքով ներքին եւ տանելի է:

Այսպիսի պարտաւորութիւնը նուիրական է ամէն մարդու, մանաւանդ բարձրաստիճան պաշտօնէից համար» :

Ինչպէ՞ս գիտեր Գրիգոր Աստուածաբանը, որ կգայ մի օր, երբ հայ արքեպիսկոպոսը ոչ թէ ձիով կամ էջով կը ճամբորդի, այլ «բենթիով»:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն Յուլիս 18, 2021ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ:

Խնդրողներն են՝
Ազնիւ Մութաֆեան
Մինաս Մութաֆեան

ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն Յուլիս 18, 2021ին Լուիզիանայի Ս. Կարապետ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ:

Խնդրողներն են՝
Արին՝ Տիկ. Ազատուհի Մութաֆեան եւ գաւակները:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՀՈՒՐԻԿ ՊԵՔՄԷՋԵԱՆ-ԿԻՒՏԷՇԵԱՆ-Ի մահուան Ա. տարելիցին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն Կիրակի, 18 Յուլիս, 2021ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ:

Սգակիրներ՝
Ամուսինը՝ Յարութ Կիւտէշեան եւ գաւակները Արա եւ Շահէ Ծնողքը՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Մարիթան Պէքմէջեան Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Անի Պէքմէջեան Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ռէպէքա Կիւտէշեան:

«...Ով որ լինի՝ թող լինի, եպիսկոպոսական աստիճան ունենալով՝ աւելի պիտի ջանայ եկեղեցւոյ մեծ վարդապետի՝ Քրիստոսի խոնարհութեան, անձնասիրութեան եւ այլն եւ այն տիպարը պատկերացնել իւր վերայ, եւ ոչ երբեք կարող է արդարանալ եւ անձին իրաւունք համարել՝ եպիսկոպոսական աստիճանը չարութեան, մոլութեանց եւ անձնական կրից վահան պատրուակելով եւ մի միայն անձնամոլութեամբ իւր պէտքը եւ շահը նկատել, եւ այլն եւ այլն» : «Եպիսկոպոսութիւն եւ եպիսկոպոսունք» Հրատ. Վահրամ եպս. Մանուկեան Արարատի Ժառանգութիւն: Եկեղեցական Մատենագրութիւն Հտ.Բ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2017, էջ. 343-346:

Այս օրէնքը դատաւարտուած է այն բոլոր եպիսկոպոսական դասի

անդամներին, ովքեր եպիսկոպոսական աստիճանը «չարութեան, մոլութեանց եւ անձնական կրից վահան պատրուակելով» նսեմացրին եպիսկոպոսաց պատուաբեր աստիճանը. «որ ունիցին ականջս լսելոյ լուիցէն»:

Վարչապետն իր ընտրութիւնների արշաւի ընթացքին աւարտում էր իր հրապարակային խօսքը՝ արտասանելով Դաւթի Սաղմոսներէից: Հայ Եկեղեցու դասը նրանից օրինակ վերցնելով, թող լինեն Երեմիա Մարգարէի ներքոյ գղջումի պատգամը .

«Տէր, աչք քո ի հաւատս տանջեցեր զնոսա, եւ նոցա ոչ ցաւեաց, պատժեցեր զնոսա, եւ ոչ կամեցան ընդունել զխրատս, կարծրացուցին գերեսս իւրեանց քան զվէմ, եւ ոչ կամեցան դառնալ» (Ե:3-4):

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ՀՈԳԻ ՇԱՄԱՐ)
(626) 797-7680

Իտալիան՝ Եվրոպայի Ախոյեան



Իտալիոյ ազգային հաւաքականը դարձաւ Եւրո 2020-ի ախոյեան: Եզրափակիչ խաղին Ռոբերտո Մանչինիի սաները 11-մեթրանոցներով յաղթեցին Անգլիայի հաւաքականին:

Լոնտոնի «Ուէմպլի» մարզադաշտէն ներս տեղի ունեցած խաղի հիմնական ժամանակը աւարտեցաւ 1-1 հաշուով: Լիւկ Շոյլի կողմէն իտալացիները պատասխանեցին Լէոնարտո Պոնուչիի արդիւնաւէտ հարուածով: Լրացուցիչ ժամանակի ընթացքին կողեր չեղան:

11-մեթրանոցներու հարուածաշարի ընթացքին Անգլիայի կազմէն երեք ֆուտպոլիստներ՝ Ջեյդոն Սանչոն, Մարկուս Ռեշֆորտն ու Պուկայօ Սական վրիպեցին, ինչը որ բաւական էր, որպէսզի Իտալիան յաղթէ՝ 3-2 արդիւնքով:

Իտալիան իր պատմութեան մէջ երկրորդ անգամ նուաճեց Եվրոպայի ախոյեանի տիտղոսը: Առաջինը 1968-ին էր: Անգլիան պարտուեցաւ իր առաջին եզրափակիչի Եւրոների պատմութեան մէջ:

Ջոկովիչը՝ Ուիմպլտոնի Յաղթող



Թենիսի ամենահեղինակաւոր մրցաշարի՝ Ուիմպլտոնի, տղոց մենախաղին յաղթեց սերբ Նովակ Ջոկովիչը:

Լոնտոնի մէջ կայացած մրցաշարի եզրափակիչին Նովակ Ջոկովիչ մրցեցաւ աշխարհի 9-րդ ռակետ իտալացի Մատէօ Պերետինիի հետ: 3 ժամ 30 վայրկեան տեւող մրցախաղի ընթացքին Նովակ Ջոկովիչը յաղթեց 4 սեթերէրէ յետոյ՝ 6:7 (4:7), 6:4, 6:3 հաշուով:

Սերբ թենիսիստը Մեծ սաղաւարտի մրցաշարերուն յաղթանակներու քանակով հաւասարեցաւ Ռոջեր Ֆետերերին եւ Ռաֆայէլ Նատալին, որոնք արդէն իսկ նուաճած են 20-ական տիտղոս: Այս Նովակ Ջոկովիչի 6-րդ յաղթանակն էր Ուիմպլտոնի մէջ:

Ուիմպլտոնը, որ կը համարուի է ամենահին եւ հեղինակաւոր մրցաշարերէն մէկը, առաջին անգաման կայացած է 1877 թուականին:

Առաջին Ռակետ Էշլի Պարթին Ուիմպլտոնի Կանանց Ախոյեան

Թենիսի Ուիմպլտոնի մրցաշարի կանանց մենախաղի յաղթողի կոչումը նուաճեց աշխարհի առաջին ռակետ Էշլի Պարթին:

Եզրափակիչին աստրալացի թենիսիստուհին 3 սեթերու ընթացքին առաւելութեան հասաւ չեխ, 13-րդ ռակետ Քարոլինա Պլիշկովայի նկատմամբ՝ 6:3, 6:7, 6:3: Մրցախաղը տեւեց 1 ժամ, 55 վայրկեան:

2012 թուականէն յետոյ առաջին անգամ Ուիմպլտոնի մրցաշարի կանանց մենախաղի եզրափակիչին յաղթողը որոշուեցաւ երրորդ սեթով: 25-ամեայ Էշլի Պարթին առաջին անգամ ըլլալով տիրացաւ Ուիմպլտոնի տիտղոսին: Մինչեւ այս Ուիմպլտոնի մրցաշարին էշլի Պարթիի լաւագոյն ցուցանիշը քառորդ եզրափակիչ հասնելն էր:

Մրցաշարի ընդհանուր հիմնադրամը 35 միլիոն ստերլինգ է: Յաղթողի կոչումը նուաճելու շնորհիւ Էշլի Պարթին կը ստանայ 1.7 միլիոն ստերլինգ եւ 2000 վարկանիշային միաւոր:

Արժանթին Copa America-ի Ախոյեան



Ֆուտթոլի Ամերիկայի Գաւաթի մրցաշարի եզրափակիչին Արժանթին մրցեցաւ Պրագիլիայի հաւաքականի հետ:

Ռիօ Տէ Ժաներոյի «Մարաքանա» մարզադաշտին վրայ կայացած խաղի մեկնարկայի վայրկեաններուն երկու խումբերն ալ շատ լաւ կը խաղային, բայց Արժանթին առաջինը օգտագործեց իր հնարաւորութիւնը: 21-րդ վայրկեանին ստանալով գնդակը՝ դիպուկ հարուածով աչքի ինկաւ Անխել Տի Մարիան:

Երկրորդ կէսը առանձնացաւ առաւել կոպիտ խաղով՝ մրցավարը ընդհանուր առմամբ 8 դեղին քարտ ցոյց տուաւ: Աւելի ակտիւ էր Պրագիլիան: Սակայն, խաղը աւարտեցաւ 1:0 արդիւնքով յօգուտ Արժանթինի:

Վերջին անգամ Արժանթին Ամերիկայի Գաւաթի տիրացած էր 1993 թուականին: Այս յաղթանակէն յետոյ արժանթինացիները հաւասարեցան Ուրուգուային՝ 15 անգամ:

Այս դարձաւ նաեւ Արժանթինի ասոյղ Լիոնէլ Մեսսի առաջին բաժակը ազգային հաւաքականին հետ:

Հայկական Խումբերու Արդիւնքները Քոնֆերանսներու Լիկայի Մրցումներուն

Ֆուտթոլի Եվրոպայի Քոնֆերանսներու Լիկայի առաջին շրջանի խաղերուն Հայաստանեան խումբերու արդիւնքները յաջող չէին:

Երեւանի Ուրարտուն արտագնայ խաղին ռժերը չափեց սլովենական Մարիբորի հետ ու պարտուեցաւ 1:0 արդիւնքով:

Երեւանի Արարատը որակաւորման փուլի առաջին խաղին մրցեցաւ Հունկարական Ֆէհերուարի հետ եւ կարողացաւ ձեռք ձգել 1-1 հաւասար արդիւնք:

Հայաստանի ախոյեան Ալաշկերտը մրցակիցի դաշտին վրայ խաղալով արձանագրեց 2:2 հաւասար արդիւնք՝ Կալեսի (Ուէյլզ) «Քոնա Քուէյ Նոմատոգ»-ին:

Միակ յաղթանակը արձանագրեց Հայաստանի փոխ-ախոյեան Նոան 1:0 արդիւնքով յաղթեց Ֆիլանտան ներկայացնող «ԿուՊՍ»-ին:



Օլիմպիական Խաղերը Առաջին Անգամ Տեղի Կ'ունենա Առանց Հանդիսականներու

Թոքիոյի Ոլիմպիական խաղերը տեղի պիտի ունենան առանց հանդիսականներու: Այդ մասին յայտնած է Ճափոնիայի կառավարութեան խաղերու պատասխանատու Տամայէ Մարուկավան:

«Միջազգային Ոլիմպիական Կոմիտէի, միջազգային Պարալիմպիկ Կոմիտէի, Թոքիո-2020-ի կազմկոմիտէի, Թոքիոյի իշխանութիւններու եւ երկրի կառավարութեան հետ հնգակողմ հանդիպման ժամանակ որոշում առնուած է խաղերը կատարել փակ դռներով», - ըսած է խաղերու պատասխանատուներէն մէկը:

Քորոնայ ժահրի համաճարակի աճի պատճառով խաղերու մեկնարկէն երկու շաբաթ առաջ ձաբոնի վարչապետ Եոսիհիդա Սուգան յայտարարած է արտակարգ դրութիւն Թոքիոյի մէջ:

Միջազգային Ոլիմպիական Կոմիտէի ղեկավար Թոմաս Պախը, որ այժմ կը գտնուի Թոքիոյ մէջ, նոյնպէս մասնակցած է առցանց հնգակողմ հանդիպման: Ան հիւրանոց կը գտնուի, որտեղ պէտք է եւօրեայ մեկուսացում ունենայ:

Կը կարծեմ, որ մենք բոլորս պէտք է ուրախ ըլլանք բոլորին պաշտպանելու համար աւելի խիստ միջոցներու կիրառման համար, - ըսած է Թոմաս Պախը:

Այս առաջին դէպքն է, որ ոլիմպիական խաղերու ընթացքին հանդիսականներուն թոյլ պիտի չտրուի ներկայ գտնուելու մրցումներուն: Ի դէպ, ոլիմպիական խաղերու մասնակիցները արդէն սկսած են ժամանել Ճափոն: